

10.020

ՊՐՈՖ. Վ. Ն. ՎԵՐԵՆՈՎՍԿԻ

# Ք Ի Մ Ի Ա

ԴԱՍԱԳԻՐԲ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ  
ՅՈՔԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

54(075)  

---

4-40

ԵՈՐԶՐԴՍՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՆՈՎՁՈՒԹՅՈՒՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1936

ն 6

09 AUG 2013

10-020

24 JAN 2007

Բնագիրը հաստատված է ՌՍՖՖՀ ԼժՎ կողմից

20 JUL 2010

54(075) գրոհ. վ. ն. վերեսնվսկի


4-48

W

# Ք Ի Մ Ի Ա

ԴԱՍԱԳԻՐՔ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԳՊՐՈՅԻ ՅՈԹԵՐՈՐԳ  
ԴԱՍԵՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐՐՈՐԳ ՎԵՐԱՄՇԱՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



557 3/21137

40102  
1010  
2010



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
1936

Պատ. խմբագիր՝ Ն. Ե ա ն ջ յ ա ն  
Քարգանեց Ա ռ շ. Ա ր ա ն ա ս յ ա ն  
Տեխ. խմբագիր՝ Գ. Ջ Ե Ն յ ա ն  
Լեզվ. խմբագիր՝ Հ ա ռ. Պ ե ս ռ ո ս յ ա ն  
Որբագրիչ՝ Ս. Շ ա հ բ ա գ յ ա ն

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս դատագրերը հեղինակի՝ միջնակարգ գործողների համար արդեն լույս տեսած դատագրքի առաջին մասի (6-րդ դատարանի դատընթաց) և յերկրորդ մասի (7-րդ դատարանի դատընթաց) առաջին գլխի բարեփոխված հրատարակությունն է:

Նշած դատագրքերը կազմելիս հեղինակն առաջնորդվել է Համկոմկոմի Կենտրոնի տարրական և միջնակարգ գործող վերաբերյալ փորձումներով և աշխատել է տալ սխտեմատիզացիայի յինթարկված հանրակրթական գիտելիքների լիակատար շրջան (դատագրերը կազմված են Վ. Ա. Ժեղալովայի, Յա. Գ. Արլափոխյայի և Նիարիչ Յա. Գ. Սկալդինի մասնակցությամբ):

Բարեփոխումներն արված են՝ յեկեկով նրանից, Վոր 7-րդ դատարանի քիմիայի դատընթացը շատ թե քիչ չափով լիակատար շրջան պետք է լինի վոչ ըրիվ միջնակարգ գործող ավարտողի համար: Սակայն հիմնական ամբողջ նյութը, զրքի կառուցվածքը և գլուխները հաջորդականությամբ մնացել են նույնը:

Դատագրերը յինթագրում է, Վոր դատընթացը պետք է մշակել դատարան լաբորատորիայում արած փորձի հիման վրա՝ դատափի անմիջական ղեկավարությամբ: Դատագրերը գլխավորապես պետք է ծառայի դատարան-լաբորատորիայում ձեռք բերած գիտելիքները և ունակութուններն ամբողջակուն

Տեսական նյութի բացատրության մեջ հեղինակն աշխատել է խուսափել դոգմատիզմից՝ բոլոր հիմնական որենքներին կոնկրետ նախադրյալներ տալով: Նյութը դատավորած է այնպես, Վոր աշակերտութան գիտելիքները զարգանան և աստիճանաբար ել ավելի բարձր աստիճանի վրա դրվին:

Դատագրքում համառոտ կերպով նկարագրված են նվազագույն աշխատանքները, Վորոնք մատչելի յեն ամենահամեստ լաբորատորիա ունեցող յուրաքանչյուր գործող:

Տեսական նյութը գտնվում է լաբորատոր աշխատանքների և արտագրութան հետ անմիջական կապակցությամբ մեջ, բայց արտագրութանը չի յինթարկված:

Այդ նյութը հնարավորութուն է տալիս աշակերտութանը բնության մեջ կատարվող գործողները մտերիալիստորեն ըմբռնելու:

Յինթագրվում է, Վոր առանձին դեպքերում դատական դումը կարող է տարվել հետազոտական մեթոդով և այդ դեպքերում նյութը դատավորում է համապատասխան ձևով:

Դատագրքում արված են յերկու անգամից հարցեր. տեքստում արված են

Հրատարակչ. № 3594. Գլավիլիտի լիազոր Վ. 342. Պատվեր № 147. Տիրած 30000  
Հանձնված է արտագրութան 19 դեկտեմբերի 1935 թ. ստորագրված է ազա-  
դրելու 28 ապրիլի 1936 թ.

Պետերապի տպարան, Յերևան, II Գնունից 4

այնպիսի հարցեր, լորոնք ստեղծում են սովորույններն ավելի խորը թափանցել շարադրած նյութի մեջ (յերբեմն դիտավորյալ կերպով արված են դժվարին հարցեր), իսկ պարադրաֆներն ու գլուխների վերջում՝ հարցերը արված են անցածը կրկնելու համար:

Բացի հարցերից, դասադրում արված են մի շարք խնդիրներ, ֆորմուլաներ և հավասարություններ՝ հաշվելու և կազմելու համար, այլև կքաղերկմենալ բնույթ կրող մի քանի խնդիրներ:

Դասադրելի բարեփոխման ժամանակ տեքստում լծվերի և սոցիալիստական շինարարության ավյալների մեջ մի շարք մանր ուղղումներ և ճշտումներ են մտցված:

Բացի այդ, դասընթացն անցնելու գործը հեղուացնելու նպատակով կատարված են հետևյալ տեղափոխությունները և փոփոխությունները:

Փոխարինման ուսուցիչային նախնական հասկացողությունը արված է ջուրը փետաղներով քայքայելու որևէակի վրա: Լուծույթների վերաբերյալ նյութը քիչ լրացված է:

Թթվածնի և նրա հատկությունների վերաբերյալ նյութը կենտրոնացված է մեկ տեղի՝ «Որ» գլխում մտցված են փոքրիկ լրացումներ, «Նյութի կազմությունը» գլխում ճշտված են «պարզ նյութ» և «տարր» հասկացողությունները՝ առոմի ուսմունքի տեսակետից, և արված է, «սխալա կլլոստորացիա», հասկացողություն նյութի ալլոտրոպ ձևափոխության մասին՝ ոգանի որևէակով Մշակված են նաև որևէղացման և վերականգնման ուսուցիչային վերաբերյալ հասկացողությունները:

«Որ»-ից, հիմքեր, թթուներ, աղեր» գլուխները, վոր դրված էյին յերկրորդ հրատարակության I և II մասերում, այժմ միացված են միատեղ, և նյութը դասավորված է համապատասխան ձևով: Արժեքակախություն մասին հասկացողություն պարզության նպատակով, արված է որևէղների ժամանակ:

Հիմնական նյութի յուրացումը հեղուացնելու նպատակով տեքստի մի մասը արված է մանր սպասառերով:

Կատարված փոփոխություններն այնքան աննշան են, վոր յեթե սույն հրատարակությունը դասադրելի պահանջը չհավարարել, աշակերտության մի մասը կարող է որևէղ դասադրելի նախորդ հրատարակություններից:

Գ Ր Ո Յ. Վ. Վ Ե Ր Ե Ո Վ Ս Կ Վ

Լենինգրադ  
1 փետրվարի 1935 թ.

## I. ՆՅՈՒԹԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՒԱՐԿՈՒՄԸ

Մեզ չբնագատող աշխարհի բոլոր առարկաները բազկացած են զանազան նյութերից: Յերկաթ, ապակի, ծառ, ջուր, շաքար և այլն, սրանք բոլորն էլ նյութերի որինակներն են:

Քիմիան զբաղվում է նյութերի և նրանց փոխադեման ուսուսասիրությունը: Ուստի և քիմիայի ուսուսասիրությունը սկսելիս, նախ և առաջ մենք պետք է կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչպես են աարբերում ու ճանաչում նյութերը:


I. Նյութեր. Նյութերը աարբերում են իրարից իրենց հատկություններով—գույնով, հոտով, համով, տեսակարար կշռով, քիչ թե շատ պնդություն, դժվարահալություն, ցնդելիություն և այլն: Որինակ՝ նկարագրելով շաքարի հատկությունները, մենք կարող ենք ասել, վոր նա կարծր, փխրուն, սպիտակ գույնի, քաղցրահամ, անհոտ, ջրում լավ լուծելի նյութ է: ջրից ծանր է, տեսակարար կշռն է 1,58, տաքացնելիս գոլորշիանում է և այլն: Վորպեսզի ծանոթանանք վորեկ նյութի հատկություններին, անհրաժեշտ է այդ նյութը վերցնել մաքուր վիճակում, վորովհետե կողմնակի նյութի ամենաչնչին խառնուրդն անզամ կարող է վորեկ կերպ փոխել նրա հատկությունները: Որինակ՝ մաքուր ջուրը թափանցիկ, անհամ և անգույն է, բայց յեթե մի բաժակ ջրի մեջ մի կաթիլ կաթ ավելացնենք, ջուրը կպղտորվի: Յեթե ջրի մեջ մի կաթիլ թանաք կաթեցնենք, ջուրը կներկվի: Խինինի (քինաքինա) շատ չնչին քանակությունից ջուրը դառը համ է ստանում: Այդ բոլորը կլինեն վոչ թե ջրի հատկությունները, այլ խառնուրդների:

Վորոչ զեպքերում մենք իսկույն նկատում ենք, վոր մեր առջև յեղած նյութը մաքուր նյութ չի, այլ զանազան նյութերի խառնուրդ է ներկայացնում:

Վորպես որինակ բերենք գրանիտը: Նրա մեջ մենք նկատում ենք դաշտային սպատի վարդագույն մասնիկներ, կվարցի

կիսաթափանցիկ բյուրեղիկներ և փայլարի մութ դույնի փայլուն թերթիկներ: Գրանիտն անհամասեռ է:

Վորոշ դեպքերում սակայն նյութի անհամասեռությունն իսկույն չի նկատվում, բայց կարելի չէ չընկալել զանազան միջոցներով: Այսպես, որինակ, կաթի անհամասեռությունը կարելի չէ չընկալել հանել, յեթե այն վորոշ ժամանակ պահենք. այդ ժամանակ կաթի յերեսին սերի խիտ շերտ է հավաքվում: Ուրեմն կաթն անհամասեռ է: Կարելի չէ ոգովել նաև միկրոսկոպով: Միկրոսկոպի տակ շատ լավ յերևում է, վոր կաթը բազկացած է հեղուկից, վորի մեջ լողում են յուղի գնդիկներ (նկ. 1):



Նկ. 1. Կորը մանրադիտակի տակ:


Թափահարելուց հետո պղտորություն կառավարեն, իսկ լուծվող նյութերը՝ պարզ լուծույթ: Որինակ՝ պղնձաբջապը տալիս է կապուչո լուծույթ, կերակրի աղը՝ անգույն լուծույթ: Վերջին դեպքում շրտում լուծված նյութերն անտեսանելի յին: Լուծված նյութը չերևան հանելու համար, շուրջ փոշու հետ թափահարելուց հետո անց են կացնում ծակոտիկն անսոսինձ, այսպես կոչված քամիչ թղթի միջով—կամում են (նկ. 2) և ստացված թափանցիկ հեղուկը—Ֆիլտրատը—չեցնում են, մինչև վոր նա ամբողջովին գոլործանա:

Յեթե այդ ժամանակ ամանի մեջ պինդ նյութ մնա, այդ նշանակում է, վոր նյութը լուծված է յեղել գոլործիացրած հեղուկի մեջ:

Կան նաև մի շարք այլ միջոցներ՝ վարեն նյութի անհամասեռությունը չերևան հանելու համար:

Այն նյութերը, վորոնց մեջ վոշ մի չեղանակով հնարավոր չի լինում առանձին մասնիկներ, փոքրիկ կաթիլներ և ընդհանրապես՝ վոշ նույնատեսակ մասնիկներ նկատել, այդպիսի նյութերը կոչվում են համասեռ նյութեր:

Յեթե նյութը համասեռ է, այդ դեռ չի նշանակում, վոր նյութը դուռ (մաքուր) է: Չուրը, վորի մեջ լուծված են շաքար կամ աղ, միանգամայն թափանցիկ է ու համասեռ. բայց այդ դուռ շուր չի, այլ խառնուրդ է: Չուտ նյութ է միայն այն նյութը, վոր կողմնակի վոշ մի խառնուրդ չի պարունակում: Չուտ նյութն ունի իր բնորոշ մնայուն (հաստատուն) հատկությունները, վորոնցով և կարելի չէ այն ճանաչել ու տարբերել մյուս նյութերից:




Նկ. 2. Հեղուկի ֆաճիլը: Հեղուկը ամուսն են ձողիկի վայրով:

Նյութը բնորոշող ամենակարեկառ հատկությունների թվին են պատկանում այն հատկությունները, վոր կարելի չէ չափել, ինչպես տեսակարար կշիռը, յեռման ջերմաստիճանը և հալման ջերմաստիճանը:

2. Նյութերը զտելու մի բանի յեղանակներ, վորոնք կիրառվում են սեխնիկայում: 1) Ֆիլտրելը (քամելը). Լաբորատորիաներում պղտոր հեղուկները ֆիլտրում են, ինչպես արդեն ասված է ծակոտիկն թղթի միջով: Արդյունաբերությունում մեջ ոգավում են ավելի դիմացկուն նյութերով—զանազան տեսակի գործվածքներով: Գործարանային ֆիլտրը ցուց է տրված 3-րդ նկարում:

2) Պարզելը. Յեթե պղտոր հեղուկը յերկար ժամանակ թողնենք հանդիստ վիճակում, այդ դեպքում պղտորությունն աստիճանաբար նստում է հատակին, իսկ հեղուկը վերևից ըլորովին պարզվում է: Պարզածը կարելի չէ ամուսնի մեջ: Այս յեղանակով հաճախ ոգավում են արտադրության մեջ:

3) **Քարու մ. Հեղուկներն իրենց մեջ լուծված նյութերից բաժանելու համար քառակ հեն, ալյուրն Նրանց գործընթացնում են և ապա գործընթացն ստանցնում:**



▲ **Փորձ.** Դասալի պարաստած պղար ու գունավորած ջրից մի փոքր մասը ֆիլտրացիայի վրա դրար պահում և, իսկ լուծված ներքին անց և կացնում:


Դասած ու գունավորած ջրից մի փոքր անեղեք 4-րդ նկարում պատկերված ապրի կուրի մեջ: Կուրն ավարտելու շատախիլի փա, իսկ կուրի հետ միացված փորձանոթն ընկղմեցեք սուր ջրով լի բաժակի մեջ: Փորձանոթի բերանը ծածկող խցանը կողքից անցք պիտի և ունենա՝ ողբ դուրս դառն համար: Կուրի մեջ լեղած գունավոր ջուրն այնքան ստորացրեք, վոր փորձանոթի մեջ թե՛ համարվի ներքև մտնում և կուրի մեջ: ▲

Նկ. 3. (Կտվածքի): Ֆիլտրացիայի գործարանային մացաքարով կտրի միջով փոր դրված և ցանցածեղ միջնուսի փա: Ֆիլտրի միջով անցնող հեղուկը ստորաքար դուրս են հանում պոստպոլեկայի ժամանակ մրկուրեթի նեոսան անկ հեղուկը հանցի միջով ավելի արագ և անցնում:

ճանաչում թյամբ մաքուր բոսած ջուր




Նկ. 4. Ջրի բուրելը:



Նկ. 5. Ջրի բուրելը Լիբիխի ստանալանով:

5-րդ նկարում պատկերված և քիմիական լաբորատորիաներում ջուրը թորելու համար գործածվող գործիքը: Այդ գործիքը բաղկացած է A կուրից, վորի մեջ լեղացվում է հեղուկը, B ստանարանից, վորի մեջ ստանցվում են գործընթացը, և D ընկղմարանից, վորտեղ հավաքվում է թորած հեղուկը:

Ստանարանը բաղկացած է ներքին B խողովակից, վորի միջով անցնում են գործընթացը, արասքին B խողովակից, վորի միջով բաց է թողնվում ջրի հասանք, վոր ստանցնում է ներքին



Նկ. 6. Քարու մ կուր (կտվածք). A—կարան և, սեղանվորված կրակակղում X—միանցիկ: K—ջրալսի խողովակ: Ե—ջուր անելու անցք: Ե—կարայի կախալիք, վոր ամրացված է ներքայնեղով: Զ—գալուսի, վոր ընկղմված է B սևոթի մեջ, վորի միջով անցնում է A խողովակով դուրս յեկող սուր ջուրը:

խողովակը: Ներքին խողովակի ծայրին հաղցրած է Դ կցորդ անոթի, վորը հեղուկն ուղղում է գեպի D ընկղմարանը:

Մեծ ճանաչում թյամբ հեղուկ թորելու համար պատվում են պղնձյա մեծ կաթնալոլ, կամ այսպես կոչվող քուրան կուրով (նկ. 6), վոր սաքացվում է կրակատեղում: Յրատարանի դերն այստեղ կատարում է պարուրածն ծած, անաղից շինված կամ ներսից անաղով պատած կլայտեկած խողովակը, այսպես կոչված գալարքը, վոր ստանցվում է ջրով:

**Կ Ր Կ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ե Ր**

1. Ի՞նչպես են տարբերվում նյութերը
2. Ի՞նչ գույնի յե լուսամուտի սպակիլն
3. Լոգը համատեա և թե՛ վոր
4. Ի՞նչպես են գտնում նյութերը
5. Ի՞նչպես է կոչվում միանգամայն գուա ջուրը և ինչպես են ստանում

3. **Նյութերի փոխակումը:** Նյութերի հետ կարող են առկի ունենալ զանազան փոփոխություններ: Այդ փոփոխությունները կարելի յե գլխուկ հետևյալ փորձերը կատարելով:

▲ Փորձեր. Կատարեցեք ստորև բերված այն փորձերը, վորոնց համար զարդյուն համապատասխան նյութեր կան:

1) Սպիրտայրոցի բոցի վրա ուժեղ կեղտով տաքացրեք ապակյա խողովակի կամ ձողիկ, համապատասխան կրկն կտոր և ապա թողեք, վոր պողեն: Դիտեցեք տեղի ունեցող յերևույթը և ուշադրութուն դարձրեք այն բանի վրա, վոր պաշտուց հետո նյութերն անփոփոխ մնացին:

2) Ունելիով կամ պինցետով բռնելով շիկացրեք պղնձյա թիթեղը: Դանակով ջերեցեք պղնձի վրա առաջացած կորկը (окалина, налет) թղթի վրա և նորից շիկացրեք ու դարձյալ ջերեցեք: Այդ գործողութիւնը կրկնեցեք 2-3 անգամ: Յետեւ այդպէս շատ անգամ կրկնեք, այն ժամանակ կարելի չե՛ մետադրյա ամբողջ թիթեղը փոխարինել մուգ գույնի փոշու: Այդ փոշին կամ կոփա փշրանքը, ակնիկ և, վոր նման չի պղնձին: Այդ նոր նյութ և Պղնձը փոխարինվեց կոփա փշրանքի:

3) Ունելիով բռնելով, տաքացրեք մի կտոր անաղաթուղթ (որինակ, այն անաղաթից, վորով կանֆիա և թեղ են փաթաթուում), մի կտոր մազնեղիումի ժաղպիկ, շաքարի մի քանի շատ փոքրիկ կտորներ, դնելով այն յերկաթյա թիթեղիկի վրա (նկ. 7): Բոյոր դեպքերում զուր նկատում եք նոր նյութի առաջացում:



Նկ. 7. Շաքար անաղաթի յերկաթյա թիթեղի վրա:

4) Փորձանոթով քիչ քանակութեամբ պարզ կաշուր վերցրեք և նրա մեջ, խողովակի միջոցի, արտաշնչած ող փչեցեք (նկ. 8): Բնագիտութեան դասընթացից դուր գիտեք, վոր արտաշնչած ողի մեջ ածխաթթու գազ կա: Կրաջուրը պղտորվում է: Այդ պղտորումն առաջանում է այն պատճառով, վոր ջրում լուծված կրից և ածխաթթու գազից նոր նյութ և առաջանում: Այդ ջրում չլուծվող, սպիտակ, կալճանան նյութ է, վորը պղտորում է ջուրը:

5) Փորձանոթի մեջ լցրեք դասառվի պատրաստած յերկու լուծույթ և զիտեցեք նոր նյութի առաջացումը: ▲

2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ փորձերի ժամանակ վերցրած նյութերի փոխարին ստացվեցին նոր նյութեր, նոր հատկութիւններով, վորոնք նման չեն վերցրած նյութերին: Այդպիսի յերևույթները կոչվում են քիմիական յերեւույթներ կամ նյութերի քիմիական փոխարկումներ:

Քիմիական յերևույթների ժամանակ նյութերը կորցնում են իրենց նախկին հատկութիւնները, անհետանում և նախկին «փորակը» և առաջ է գալիս նոր փորակ, նոր նյութեր՝ բոլորովին ալլ հատկութիւններով:

Այլ դեպքերում յերևույթներին չի ուղեկցում նոր նյութերի առաջացում: Արինակ՝ ապակյա խողովակը տաքացնելու

ժամանակ նա սկսում է կարմրել, փափկել, ճկվել, բայց ապակին մնում է անփոփոխ—վորպես ապակի: Խողովակը պաղելուց հետո նա նորից ստանում է իր նախկին հատկութիւնները: Տաքացումից նույնպէս չեն փոխվում հալածապակին, կիրը: Այդպիսի յերևույթները քիմիական յերեւույթներին են վերաբերում:


Բերեք ստորյա կյանքից և արտադրութիւնից ձեզ հայտնի քիմիական յերևույթների որինակներ: Քիմիական յերևույթներ են արդո՞ք՝ 1. Երկաթի ժանգոտելը: 2. Ջրի թորումը: 3. Շաքարի կտորը հալանդի մեջ մանրացնելով, փոշու փոխարկելը: 4. Ածխի և մոլորի առաջացումը փայտի այրման ժամանակ: 5. Կապարի փոխարկումը կոտորակի:



Նկ. 8. Արտաշնչած ողն անց են կացնում կաշրի մեջ:

Ավելի մանրամասն կանգ առնենք քիմիական զանազան փոխարկումներին, քիմիական ռեակցիաների վրա:

4. Քայլալուսն ռեակցիա: Գայքայման ռեակցիային կարելի չե՛ ծանոթանալ հետևյալ փորձերի միջոցով:



Նկ. 9. Մալախիտի քայլալուսն:


▲ Փորձ 1. Փորձանոթի մեջ շատ քիչ քանակութեամբ (նկ. 9) պղնձի ածխաթթվական աղի փոշի տաքացրեք (պատանում է բնութեան մեջ մալախիտ հանքի ձևով): Փորձանոթը պահեցեք հորիզոնական դիրքով, ինչպես այդ ցույց է աված նկարում, և դիտեցեք տեղի ունեցող յերևույթները: ▲

Մալաքիտի տաքացման ժամանակ ստացվում է սև գույնի նոր նյութ, վորն իր հատկութիւններով փոշ ալլ ինչ է, բայց յեթե նույն պղնձնաթթուի վրա, վոր ստացվում է պղնձի շիկացման ժամանակ: Փորձանոթի ստոր պատերին նստել են ջրի կաթիլներ: Վերտեղից առաջացան այդ յերկու նյութերը: Նրանք առաջուցան այն մալաքիտից, վորն անհետացավ:

Քիմիական ռեակցիաների ժամանակ կարող են նյութեր անջատվել գազային վիճակում: Գազերը մենք կարող ենք նկատել միայն այն դեպքում, յերբ նրանք գունավորված են լինում: Ռեակցիայի ժամանակ անջատվող անգույն գազերը մեր ուշադրութիւնից հեռութեամբ կարող են վրեպել: Այս հանգամանքի պատճառով գազերն սխալ են տարբերել և ուսումնասիրել միայն

**XVIII** դարի վերջում, չերբ սովորեցին գազերը հալաքել ջրի վրա:

Մալաքիտի տաքացման փորձը կատարելով՝ մենք չենք նկատում, վոր բացի պղինձօքսիդից ու ջրից, առաջանում է նաև անգույն գազ: Այդ գազը կարելի չէ հալաքել:



Նկ. 10. Մալաքիտի հալաքման համար սարքած գառձիկը:

քիտը: Սկզբում տաքացրեք 10-րդ նկարում a տառով ցույց տված սեղմ և ապա ստանձանարար բոցը մտնեցրեք փորձանոթի հասակին: Յերբ գազատար խողովակից սկսեն գազի պղպջակներ դուրս գալ, քիչ սպասեցեք, վոր գազը դուրս մղի փորձանոթի մեջ յեղած ողը, և ապա գազը հալաքեցեք փորձանոթի մեջ՝ ջրի վրա: ▲

Ի՞նչ գազ է այդ: Բնագիտությունը դասընթացից հաշտնի չեն մի քանի գազերի հատկությունները: Ի՞նչ գիտեք, վոր թթվածնի, մեղ առկայծող մարխը բոցավառվում է, իսկ ածխածինը գազի և ազոտի մեջ վառվող մարխը հանդուրում է: Ածխածինը գազն ազոտից կարելի չէ տարբերել կրաջրի ոգնությունով:

Մեր հալաքած գազը հանգցնում է վառվող մարխը և պղտորում կրաջուրը: Ուրեմն ածխածինը գազն է այդ:

▲ **Փորձ 3.** Փորձանոթի մեջ քիչ քանակությամբ սևիլիկոսիդ տաքացրեք՝ փորձանոթը պահելով թեք դիրքով, ինչպես այդ ցույց է տրված նկարում (նկ. 11): Պետք է սեղեղ ու յերկար տաքացնել բոցի մանրատար մասում (վերին մասում): Փորձեցեք առկայծող մարխով: Ի՞նչ համոզվում եք, վոր փորձանոթի մեջ քրվածվել է Փորձանոթի սառ պատերի վրա դուք տեսնում եք սևիլիկ կաթիլներ: ▲

Ի՞նչպե՞ս այս յերևույթների ժամանակ մեր վերջրած նյութերի փոխարեն ստացվեցին յերկու կամ մի քանի նոր նյութեր, նոր հատկություններով: Բիմիական նման աեակցիաներ

շատ հաճախ են նկատվում և կոչվում են սաբբալուծման աեակցիաներ:

Մալաքիտի քայքայման աեակցիան կարճաթյան համար կարելի չէ պայմանորեն արտահայտել հավասարության ձևով:

Մալաքիտ = պղինձօքսիդ + ջուր + ածխածին գազ:

Իրեցեք սնդիկաքիտի տարբալուծման աեակցիայի հավասարությունը:

Տարբալուծման աեակցիան հաճախ են կիրառում աեխնիկայում: Այսպես, որինակ, կրաքարի (կրաքար, մարմար, կալիմ) այրելու ժամանակ աեղի յե ունենում տարբալուծման աեակցիա: Ստացվում են յերկու նոր նյութեր — այրած կիր, վոր ոգտապարծում են շինարարությունի մեջ, և ածխածին գազ:

Կրաքար = կիր + ածխածին գազ:

12-րդ նկարում պատկերված է կրաքար այրելու աճենապարզ վառարանի կարվածքը:

**5. Միացման աեակցիա:** Բիմիական աեակցիան կարող է աեղի ունենալ վոր միայն մի նյութի հետ, ինչպես նախորդ փորձերի ժամանակ, այլ նաև այն դեպքերում, յերբ մենք վերցնում ենք յերկու կամ ալեկի նյութեր: Յերկու նյութերի քիմիական փոխադրեցությունը որինակը հեշտությունը կարելի չէ դիտել յերկաթի ու ծծմբի միջև աեղի ունեցող աեակցիայի ժամանակ: Յերկաթը և ծծումբը մենք կվերցնենք մանր փոշու վիճակում:

Յերկաթը փոշու վիճակում դորշազույն է և, ինչպես մյուս մետաղները, մանրացած վիճակում չունի մետաղի բնորոշ փայլը, բայց ունի յերկաթի բոլոր հատկությունները՝ ձգում է մազնիսը, սուղվում է ջրի մեջ և այլն:

Ծծումբը դեղին գույնի փոշի չէ, այրվում է կապույտ բոցով: ջրում թափահարելիս բարձրանում է ջրի յերեսը (վորովհետև ջրից չի թրջվում): Մազնիսը նրան չի ձգում:

▲ **Փորձ 1.** Իզոլով կամ սովորաթղթի կտորով վերցրեք մտափորպես հավասար ծավալով ծծմբի և յերկաթի փոշիներ և հավանդի մեջ կամ թղթի կտորի վրա լառանեցեք՝ լավ արտրելով բոլոր գնդիկները: ▲



Նկ. 11. Սեղիկոսիդի տաքացնելը:



Ստացված փոշին արտաքին տեսքով կարելի չէ ընդունել վորպես նոր նյութ, վորովհետև առանձին հատիկներ չենք տեսնում: Փոշին րվում է համասեռ:



Նկ. 13. Կամառ այրելու ամենապարզ վառարանի կտրվածք: Կամառը դաստակ է քարի մեջ, վոր շինված է սառալանջում. ներքևից վառում են կրակը:

Պարզ է, վոր ծծմբի և չերկաթի փոշիների խառնուրդի հապտոթյունները, վերցրած փոշիների քանակի համեմատ, կարող են փոխվել, այն է՝ յեթե շատ է ծծումբը, փոշին կլինի դեղնադուրյն, քիչ լինելու դեպքում—մուգ դուրյն է ունենում:

Ծծմբի և չերկաթի փոշիներն իրար խառնելու ժամանակ քիմիական վոչ մի սեղանա տեղի չի ունենում, և նոր նյութեր էլ չեն ստացվում: Սակայն սեղանա կարելի չէ առաջացնել, յեթե այդ խառնուրդը տաքացնենք: Այս դեպքում ծծումբը և չերկաթը պետք է վերցնել վորոշ քանակներով, այն է՝ 7 կշռամաս չերկաթ և 4 կշռամաս ծծումբ:

▲ Փ ա ռ ձ 2. Կշռեցեք 3,5 գրամ չերկաթ և 2 գրամ ծծումբ: Շատ խնամքով իրար խառնեցեք հավանդի մեջ կամ թղթի վրա: Դուր կհամոզվեք, վոր այս դեպքում ևս անհամասեռ նյութ է ստացվում, և վոչ թե նոր նյութ: ▲

Պատճառով է մի քիչ թողնելով թղթի վրա՝ մնացածն անհեղձ քիչ փորձանոթի մեջ: Փորձանոթն ամրացրեք շտատիլի վրա (ինչպես այդ պուրջ է տրված 13-րդ նկարում) այնպես, վոր փորձանոթը շտատիլի չերկաթյա տակտակի վրա դանդի (չեթե շտատիլը փայտից է, փորձանոթի տակը չերկաթի կամ թիթեղի մի կտոր դրեք): Զգուշությամբ տաքացրեք ամբողջ փորձանոթը և ապա ուժեղ կերպով ներքևից տաքացրեք այնքան, մինչև վոր սեղանա սկսվի. ապա դադարեցրեք տաքացնելն ու դիտեցեք: Դուր նկատում էք, վոր խառնուրդն ինքն իրեն շինվում է—սեղանա չ. ունենում ջերմության անջատում:

Թողեք, վոր ստացված նյութը պահի, և ապա կտորելով փորձանոթը՝ հեռացրեք ապակու կտորասանքը: Ստացված նոր նյութը նման չէ վոչ վերցրած փոշուն, վոչ չերկաթին և վոչ էլ ծծմբին:

Ստացված այդ նյութը հավանդի մեջ արորելով փոշի դարձրեք: Այդ փոշու գույնը վերցրած փոշու գույնին նման չի: Ստացված փոշուց մի քիչ անհեղձ քիչ մեջ ու թափահարեցեք. ամբողջ փոշին սուղվում է: Արդյունքները բոլորովին այլ են, քան սկզբնական փոշու արդյունքները:


Պատճառով է տաքացնելուց հետո ստացվեց նոր վորակ—նոր նյութ՝ նոր հատկություններով: Իսկ ինչպես ստացվեց այդ նոր նյութն ստացվեց ծծմբի և չերկաթի քիմիական իրար հետ միացնելու հետևանքով: Այդ յերկու նյութերն առաջացրին մի նոր նյութ, և իրենք մտան նրա բաղադրության մեջ: Ստացված նոր նյութը կոչվում է ծծմբաթիլ: Տեղի ունեցավ քիմիական սեղանա՝ հակառակ տարրալուծման սեղանային: Այդ սեղանային կոչվում է միացումն սեղանային: Միացման սեղանային հետևանքով առաջացած նոր նյութը՝ ծծմբաթիլը, կարելի չէ կոչել «ծծմբի և չերկաթի քիմիական միացություն» կամ պարզապես «ծծմբի և չերկաթի միացություն»:

Ինչպես տեսնում էք, «միացություն» բառը կարելի չէ գործածել թե չերկաթի նկատմամբ, այսինքն սեղանային վերաբերմամբ և թե ստացված նյութի վերաբերմամբ:

Սեղանային կարելի չէ պատկերել այսպես. Ծծումբ + չերկաթ = ծծմբաթիլ:

Դիտելով ծծմբի և չերկաթի միջև տեղի ունեցող սեղանային ժամանակ առաջացող չերկաթները, սովորողները վամանք կարծում են, վոր այստեղ էյականն այն է, վոր ծծումբը և չերկաթը լարվում են: Երանք մասամբ միայն իրավացի չեն:

20104  
1010



Նկ. 13. Ծծմբի յեղ չերկաթի խառնուրդ պարունակող փորձանոթ:



Յեկ իռկապես, խառնուրդի յերեսի ծծմբի մի չնչին մասը, վոր անմիջապես շփվում է ողի հետ, տաքացնելու ժամանակ վառվում է, և մենք նկատում ենք վառվող ծծմբի բոցը: Բայց այրվողը ծծմբի մի չնչին մասն է. ծծմբի գլխավոր դանդաղածը չի այրվում, այլ միանում է յերկաթի հետ: Այդ միացման ժամանակ, ինչպես և այրման ժամանակ, տեղի յե ունենում օափացում, և դանդաղածը շիկանում է:

Ծծմբի և յերկաթի միջև տեղի կունենա ուսակցիա և աչն ժամանակ, յեթե 3,5 գրամից ավելի յերկաթ կամ 2 գրամից ավելի ծծումբ վերցնենք: Այդ դեպքում սակայն ծծմբի կամ յերկաթի ավելորդ մասը միացության մեջ չի մտնի:

Ծծմբի հետ կարող են միանալ ուրիշ շատ մետաղներ՝ պղինձ, ցինկ, ալյումին և այլն:

Այս դեպքում նույնպես ուսակցիաներն ընթանում են վորոշ կշռային հարաբերությամբ: Որինակ՝ 4 գ պղինձի հետ միանում է 1 գ ծծումբ, 2 գ ցինկի հետ՝ 1 գ ծծումբ, 1,7 գ ալյումինի հետ՝ 4,8 գ ծծումբ:

Ռեակցիա սոսաջացնելու համար վերը դիտած յերկաթների ժամանակ մենք ոգտվում էինք տաքացնելով. բայց լինում են և այնպիսի դեպքեր, յերբ նյութերը միանում են իրար հետ՝ առանց նախապես տաքացնելու: Այդպիսի միացման որինակ կարող է ծառայել տեխնիկայում կիրառվող սեակցիան, աչն է՝ այրած կրի միացումը ջրի հետ կամ կրի «մարումը»: Կրի վրա ուղղակի ջուր են ածում, առաջ է դալիս ուժեղ տաքություն, կիրը վեր է ածվում փոշու և ստացվում է նոր նյութ՝ նոր հատկություններով, այն է հաեզամ կիր:

Այրած կիր + ջուր = հաեզամ կիր:

Հանգամ կրի, ավազի ու ջրի խառնուրդը գործ են ածում շինարարության մեջ:

Տաքացումը, կամ ինչպես ընդունված է ասել «զերմուրյան անջատումը», քիմիական միացման շատ ուսակցիաների բնորոշ հատկանիշն է հանդիսանում: Յերբեմն ջերմության այդ անջատումը շատ մեծ է, ինչպես փայտի և այլ նյութերի այրման ժամանակ, ինչպես որինակ՝ ծծմբի և յերկաթի միջև տեղի ունեցող ուսակցիայի ժամանակ: Յերբեմն էլ քիչ ջերմություն է անջատվում, ինչպես որինակ՝ կիրը հանգցնելու ժամանակ: Ըստ

ջերմության անջատման՝ մենք կարող ենք յեղրակացնել, վոր տեղի յե ունեցել քիմիական ուսակցիա: Իսկ յեթե ջերմություն չի անջատվում, մենք կարող ենք յենթադրել, վոր վաղ մի նոր նյութ չի ստացվել, վոր ուսակցիա տեղի չի ունեցել, այլ միայն խառնուրդ է սոսաջացել: Բայց այդ միայն յենթադրությունն էլ ինի, վորովհետև լինում են նաև միացման այնպիսի ուսակցիաներ, յերբ ջերմություն չի անջատվում: Մնաքի լուծման համար անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրություն, վոր սպասուցվի ստացված խառնուրդի անհամասեռությունը կամ նոր նյութի սոսաջացումը:

6. Քիմիական փոխարկումները կյանքում, առաջուրյան յեկ բնության մեջ: Մենք ծանոթացանք քիմիական ուսակցիաների յերկու հիմնական սեակցիաներին: Մյուս բոլոր ամենաբազմապիսի ու բարդ ուսակցիաները մեծ մասամբ կարող են վերածվել այդ յերկու հիմնական ուսակցիաներին:

Չենք բերելով քիմիական վորոշ գիտելիքներ, այժմ ուշադրությամբ գիտենք մեզ շրջապատող կյանքը: Թե սուրբա կյանքում, թե արտադրության և թե ընթացման մեջ ամեն քայլափոխում մենք պատահում ենք նյութերի փոփոխությունների, քիմիական փոխարկումների: Փայտը վառարանում աչրվելիս, նրանից ստացվում են նոր նյութեր և անջատվում է ջերմություն: Ծննդի պատրաստելն ուղեկցում է քիմիական մի շարք փոխարկումների հետ: Ալյուրը, վորից հաց են թխում, մի շարք նոր հատկություններ է ձեռք բերում, միսը, ձու, նույնպես և կաթը՝ թթվելիս մի շարք նոր նյութեր են ստացվում, վոր թթու համ ունեն: Խմորին սողա կամ «ամսիում» ավելացնելով, մենք ոգաղվում ենք աչր նյութերի փոխարկումով, վորի ընթացքում նրանցից գազեր են առաջանում, բարձրացնում են խմորը և այլն:

Մարդու և կենդանիների որգանիզմի մեջ, ինչպես այդ գիտենք բնագիտության դասընթացից, տեղի յե ունենում անդանյութերի անընդատ փոխարկում, առաջ են գալիս նոր նյութեր, վորոնցից որգանիզմն իր մարմնի բջիջներն ու հյուսվածքներն է կառուցում: Ծնչատության պրոցեսը նույնպես ուղեկցվում է քիմիական փոխարկումներով, վորոնք տեղի յեն ունենում որգանիզմները մեջ:

Քիմիական պրոցեսներ են տեղի ունենում նաև բույսերի

որգանիդմների մեջ: Ամեն մի կյանք կապված է քիմիական ան-  
վերջ փոխարկումների հետ: Քիմիական փոխարկումներ են կա-  
տարվում նաև անորգանական բնության մեջ. որինակ՝ գրանիտը  
քայքայվելով փոխարկվում է ավազի և կավի: Այլ լեռնային  
տեսակները նույնպես դանդաղ կերպով փոխարկվում են:

Արագորության մեջ ել յուրաքանչյուր քայլափոխում մենք  
քիմիական փոխարկումների յինք պատահում: Բնական հում  
նյութերը, յինթարկվելով քիմիական մի շարք փոխարկումների,  
արժեքավոր նոր նյութեր են սալիս. կրաքարից ստանում են  
կիր, հողոս ու քարոտ հանքաքարերից՝ արժեքավոր մետաղներ,  
կավից՝ ճենապակի և հախճապակի, կրաքարից, սողալից և ավա-  
զից՝ ապակի, ճարպից՝ յոճառ, ստեարին, գլիցերին. կարտոֆիլից՝  
սպիրտ: Քիմիական գործարաններում դանդաղ գոյնի ու յի-  
րանդի ներկող նյութեր են պատրաստում. պատրաստում են  
նաև թթուներ, աղեր, պայթուցիկ և թունավոր նյութեր, դեղո-  
քայք, արհեստական պարարտանյութեր և այլն և այլն:

Բացի քիմիական այն փոխարկումներից, վորոնց ընթաց-  
քում արժեքավոր նոր պրոդուկտներ են ստացվում, մեր շրջա-  
պատում տեղի յեն ունենում մեզ համար անցանկալի քիմիա-  
կան պրոցեսներ. յերկաթը ժանգոտում է, պղինձը սևանում ու  
կանաչում է, փայտը փուտում է, աննդանյութերը հոտում են և  
այլն:

Ընդհանրապես մեր շուրջը տեղի յեն ունենում նյութի ան-  
ընդհատ փոփոխություններ:

Յերբեմն այդ փոփոխություններն աննշան են, և նրանց  
հետևանքը նկատելի յե դառնում միայն շատ յերկար ժամանա-  
կից հետո, իսկ յերբեմն ել փոխարկումները մեր աչքի առաջ են  
կատարվում: Մեզ շրջապատող ամբողջ բնությունը հանգիստ վի-  
ճակում չի գտնվում, այլ անընդհատ փոփոխվում, փոխարկվում,  
օարժվում է:

Նյութի—մտտերիայի այդ բնական և անընդհատ շարժման  
մեջ շատ գործունյա մասնակցություն ունի մարդը, վոր աշխա-  
տում է տիրապետել բնական այդ պրոցեսներին, ուսումնասի-  
րում է նրանց և ուսումնասիրելով՝ ստիպում է, վոր նրանք  
իրար հարկավոր ուղղությամբ ընթանան: Ներգործելով բնու-  
թյան վրա, իր գործարաններում, ֆարրիկաներում, լաբորատո-

րիաներում, կոլանտեսություններում ու խորհանտեսություն-  
ներում, մարդն ստիպում է բնության՝ յինթարկվել իրեն և իր  
նպատակներին ու կարիքներին ծառայել:

Անընդհատ պայքար մղելով բնական պրոցեսներին տիրա-  
պետելու համար, մարդն ազատագրվում է բնությանը լրիվ յին-  
թարկվելուց: Այդ ուղղությամբ ձեռք բերած նվաճումները մար-  
դուն բարձրացնում են ել ավելի վեր՝ բնությանը տիրապետե-  
լու ուղղությամբ, և նա աստիճանաբար ազատագրվելով բնու-  
թյան ճորտությունից՝ դառնում է նրա տերը: Բաց այդ նվա-  
ճումները մարդկությունը միշտ ել լիարժեք չի ոգտագործում:  
Այստեղ ամեն ինչ կախված է նրանից, ում ձեռքում գտնվում  
են այդ նվաճումները:

■ Կապիտալիստական յերկրներում գիտության ու տեխնիկայի  
նվաճումները ոգտագործում են այն նպատակով, վոր մի բուռն  
կապիտալիստ համաշխարհային շուկայում հաջողությամբ մրցեն  
ու պայքարեն և անընդհատ ավելացնեն իրենց մասնավոր հսկա-  
յական կապիտալները: Իսկ այդ վոչ միայն չի թեթևացնում աշ-  
խատավոր մասսաների դրությունը, այլ ընդհակառակը, անխու-  
սափելիորեն ավելի ու ավելի աղքատություն, գործազրկություն  
և անընդհատ աճող հարկերի դժվարություններ է ստեղծում:

Բացի այդ, կապիտալիստական յերկրներում գիտության  
այն նվաճումներն են ոգտագործում միայն, այն գտուտներն ու  
հնարվածքները, վորոնք ձեռնտու յեն կապիտալիստներին: Իսկ  
այն բոլորը, վոր կարող է փաստել նրանց մասնավոր շահերին,  
արհեստական կերպով վերացնում են, թագցնում, արգելակում,  
ինչքան ել նրանք արժեքավոր լինեն բոլոր աշխատավորների  
համար:

Իսկ սոցիալիստական յերկրում գիտական ամեն մի նվա-  
ճում անմիջապես ոգտագործվում է գործնական նպատակների  
համար և ամբողջ աշխատավորության սեփականությունն է դառ-  
նում:

Այդ նպատում է աշխատավորական լայն մասսաների նյու-  
թական ու կուլտուրական դրության բարելավման և զինում է  
նրանց գիտակցաբար ու ծրագրված պայքարելու՝ բնությանը  
տիրապետելու համար: Գիտությունը պրոլետարիատի ձեռքում  
միայն կարող է հաղթականորեն դեպի առաջ շարժվել և տալ

այն հետևանքները, ինչ վոր կարող է տալ և դառնալ այն իսկապես հզոր զենքը, վորով մարդը սլաքաբարում է՝ բնությանը տիրապետելու համար:

Կ Բ Կ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞վ է տարբերվում քիմիական յերեռչքը Ֆիզիկականից:
2. Քիմիական փոխարկման ինչ տեսակներ գիտեք:
3. Ի՞նչ նյութեր դուք տարբարում եք և ինչ տաքացաք:
4. Կատարած ուսուցիչներն արտահայտեցեք սխեմաներով:
5. Արտադրութունից բերեք տարբարուման ուսուցիչայի որինակներ:
6. Բերեք միացման ուսուցիչների որինակներ:
7. Բերեք քիմիական փոխարկումների որինակներ՝ ձեզ մոտիկ արտադրութունից:

II. Զ Ո Ւ Ր

Քիմիայի խնդիրներն են՝ ուսումնասիրել նյութերը, նրանց հատկութունները, քիմիական ուսուցիչներն ու բաղադրութունները:

Վորպեսզի ծանոթանանք, թե ինչպես են ուսումնասիրվում նյութերը, կանգ առնենք մի վորոշ նյութի վրա և փորձենք քիչ թե շատ մանրամասնորեն ուսումնասիրել այն:

Վորպես այդպիսի նյութ վերցնենք ամենասովորական նյութը — ջուր:


1. Զուրը բնության մեջ: Զուրն ամենաշատ տարածված նյութերից է: Հեղուկ է կարծր վիճակում՝ վորպես ծով, գետ, ձյուն ու սառույց՝ Զուրը բռնում է չերկրի մակերեսի մոտ 71<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Նա ներծծված է հողի, լեռնային տեսակների մեջ, գոլորշիների ձևով գտնվում է ողում և մտնում է կենդանիների ու բույսերի բաղադրության մեջ: Մարդու մարմնի մեջ Զուրը կազմում է նրա կշռի մոտ 75<sup>0</sup>/<sub>0</sub>-ը. մի քանի բանջարեղենի ու պտուղների մեջ, ինչպես, որինակ, վարունգի մեջ, 95<sup>0</sup>/<sub>0</sub> և ավելի Զուր է պարունակվում: Զրի քանակութունը սովորաբար վորոշում են՝ նյութերը 100<sup>0</sup>-ում չորացնելով:

14-րդ նկարում ցույց է տրված քիմիական լաբորատորիաներում կիրառվող չորացման լեղանակը: Չորացող նյութը տեղափորում են թասի մեջ, կշռում ու դնում են չորացնող պահարանի զարակի վրա. պահարանը տաքացնում են այրոցով: Զեր-

մատիճանը հետզհետե բարձրանում է և վերջում պահվում է 100<sup>0</sup>-ից քիչ բարձր, մինչև վոր թասի քաշը նյութի հետ միասին կրկին կշռելու այլևս չի պակասի:

15-րդ նկարի դիագրամները ցույց են տալիս Զրի քանակը զանազան բուսական ու կենդանական նյութերի մեջ:

Բնական Զուրը չերբեք կատարելապես մաքուր չի լինում: Նրա մեջ կարող են լինել և լուծվող խառնուրդներ. այդ խառնուրդները չերբեմն աչքով անտանելի չեն, վորովհետե նրանք Զուրը պղտորում են, իսկ չերբեմն ել լինում են լուծված վիճակում: Լուծված խառնուրդների ներկայութունը Զրի արտաքին տեսքից աննկատելի չէ: Զուրը կարող է լինել պարզ և թափանցիկ, բայց գոլորշիացնելուց հետո մնացորդ է տալիս: Այդպիսի Զուրը հաճախ կաթոսաներում ու հեշտաչեղաներում քարացում է տալիս:



Նկ. 14. Չորացնող պահարան:

Զուրը նյութերը, վորոնք պարունակվում են Զրի մեջ գերախ ձևով, կամ, ինչպես ասում են՝ «կախված» վիճակում, կամ սուսպենդիայի ձևով (սուսպենդիա — լատիներեն բառ է, վոր նշանակում է «կախված վիճակում»), կարող են շատ բազմազան լինել. ավազի, կավի և այլ լեռնային տեսակների մասնիկներ, բուսական և կենդանական մնացորդներ և վերջապես կենդանի մանրադիտակային եյակներ — զանազան ինֆուզորիաներ, բակտերիաներ և այլ միկրոօրգանիզմներ: Դրանց թվում կարող են լինել և այնպիսիները, վորոնք զանազան հիվանդութունների պատճառ են դառնում. դրանք հիվանդաբե միկրոօրգանիզմներ են (նկ. 15):

Զուրը հսկայական նշանակություն ունի մեր կյանքում: Զուրը մենք ոգտազործում ենք խմելու համար, կերակուր պատրաստելու, մաքրության համար, Զրային ջեռուցում պատրաստելու համար և այլն: Առանց Զրի դուրանանտեսութուն չի

կարող լինել, վորովհետև ջուրն անհրաժեշտ է թե բույսերի և թե կենդանիների համար: Դեռերի, ծովերի, լճերի և ովկիանոսների ջուրը հաղորդակցության աժան ու հարմար ճանապարհ է հանդիսանում: Ջրով, վորպես շարժիչ ուժով, մենք ոգտվում ենք վոչ միայն ջրադացների համար, այնպիսի հսկայական կառուցումների համար, ինչպիսին են — Ինեպրոպեսը, Վոլխովգեսը և այլն, վորտեղ թափվող ջուրն ոգտադործում են հսկայական քանակությամբ ելեկտրոնների գիտ ստանալու համար: Ջուրն անհրաժեշտ է շինարարության գործում՝ կավը, կիրը և ցեմենտն իրար խառնելու համար: Համարյա վոչ մի արտադրություն առանց ջրի յուր գնալ չի կարող: Ջուրը պետք է շոգեկաթսանների և տուրբինների համար, զանազան տեսակի սառնարանների համար, զանազան նյութեր

Արտուր 95%
(Ճարտուր 88%
Կարտուր 75%
Մոս 75%
Ջուր 73%
Փաշ 45%

Նկ. 15. Զանազան նյութերի մեջ յեղած ջրի կանակությունը (չսովերագծված):

լուծելու համար, զանազան նյութեր ըլանալու, թրջելու, ներկելու, դարադելու համար և այլն:

Մտածեք, թե ինչի համար է պետք գալիս ջուրը ձեր արտադրության մեջ:

2. Զրի գտումը յեվ գուտ ջրի Ֆիզիկական հասկությունները: Թե խմելու և թե շատ արտադրությունների համար գործածվող ջուրը պետք է զտել:


Ջրից նրա մեջ կախված խառնուրդները հեռացնելու համար ջուրը քամում են:

Ջուրը քամելու համար սովորաբար գործ են անում ավազի քամոցներ:



Նկ. 16. Զուր արտադրող ճիվանդաբեր միկրոարգանիզներ (մեծացրած 3000 անգամ). a—սիճի բակտերիա, b—խոլերիայի բակտերիա, c—բարախաբեներ (սաֆիլոսկներ):


Մեծ քաղաքներում հսկայական մեծության ավազե կամոցներ են շինում, այդ հասարակ ավազե ֆիլտրները մի քանի հեկտար մակերես են ունենում: Իրանք գետնի մեջ փորած ավազաններ են, շինված ջրի համար անթափանցելի նյութերով ցեմենտով:



Նկ. 17. Քաղաքի կամոցի կտրվածք:

Ավազանները ծածկված են կամարներով, վորոնց վերևը հողի շերտ է փոած, վորն ամառը ջուրը պաշտպանում է տաքանալուց, իսկ ձմեռը՝ սառելուց:

Ավազանը ծածկում են ավազի շերտով: Քամվող ջուրը հավաքվում է ավազանի հատակում տեղավորված խողովանների մեջ, վորոնց միջով անցնում է գետնի ջրմուղը (նկ. 17 և 18):



Նկ. 18. Քաղաքային կամոցի ներքին տեսք. կամոցից հեռացված է ավազը:

Ջուրն ավազի միջով քամվելով, միկրոարգանիզներից թալրովին չի սպառնում: Այդ պատճառով ել այն վայրերում, վորտեղ հիվանդարերը լակտերիաները շատ են լինում (ինչպես Լենինգրադում), ջրմուղների ջուրը, բացի քամելուց, նաև ախտահանում են՝ ավելացնելով զանազան հակաանիսիչ նյութեր (ինչպես որինակ՝ քլոր՝ ջրի քլորացում), վորոնք սպանում են միկրոարգանիզներին:

1 Քլորը թունավոր գազ է. ջրի հետ ջրին աստիճանաբար ասաջացնում է ազաթթու, վորի թույլ լուծույթը մեզ համար անվնաս է:

Յեթե ջուրը չի ախտահանվում, կամ քլորիտի կամ միջոցներով վատ ե ախտահանվում, այդ դեպքում ջուրը գործածելուց առաջ յեռացնում են, վորպեսզի նրա մեջ չեղած միկրոօրգանիզմները վոչնչանան: Շատ վայրերում, ինչպես որ ինակ՝ Լենինգրադում, (չնայած վոր ջուրը քլորով ախտահանում են), կարելի չե խմել միայն յեռացրած ջուր, վորովհետև այդ դեպքում ջրի մեջ սովորաբար քիչ բակտերիաներ են անում:

Միանգամայն մաքուր ջուր, վոր իր մեջ չի պարունակում վոչ կախված և վոչ ել լուծված նյութեր, կարելի չե ստանալ թորման միջոցով (քորած ջուր), վորին մենք արդեն ծանոթ ենք:

Հիշենք մաքուր ջրի Ֆիզիկական հատկությունները, վորոնք ձեզ ծանոթ պետք ե լինեն բնագիտություն դասընթացից:

Ջրի սեսակարար կօրն բնությունում են վորպես միավոր: Ջուրը յեռում ե  $100^{\circ}$ , սառում ե  $0^{\circ}$  Յ:

Գույնի սեսակեսից ջուրը մենք համարում ենք անգույն, բայց իրոք նա բաց-կապտավուն գույն ունի և միայն բարակ շերտերով ե անգույն թվում, ինչպես ապակին (չեթե ապակուն նախնք յղորից, պարզ կերպով նկատելի չե, վոր ապակին կանաչավուն կամ կապտավուն գույն ունի):

Համի սեսակեսից թորած մաքուր ջուրը, համեմատած խմելու ջրի հետ, ասում ենք՝ անհամ ե: Աղբյուրի և ընդհանրապես խմելու լավ ջուրը մեզ համով ե թվում այն պատճառով, վոր նրա մեջ լուծված աղեր ու դազեր կան. բոլորովին մաքուր ջուրն անհամ ե: Ջուրը վատ ե անցկացնում ջերմությունը և համարյա չի անցկացնում ելեկարականությունը:

Յ. Ջուրը վորպես լուծիչ: Ջուրը շատ լավ լուծիչ նյութ ե. նա իր մեջ լուծում ե թե պինդ, թե հեղուկ և թե գաղաչին նյութեր:

Մենք արդեն պատահել ենք լուծույթների և գիտենք, վոր լուծույթ կոչվում ե այն հեղուկը, վոր իր մեջ կողմնակի նյութեր ե պարունակում, բայց միանգամայն թափանցիկ ե, վորի մեջ կախված վիճակում վոչ մի մասնիկ և վոչ ել գերա կարելի չե յերևան բերել: Առորդ կանքում սխալմամբ հաճախ լուծույթ են անվանում կավախառն կամ կրախառն ջուրը: Դրանք, ի հարկե, լուծույթներ չեն, այլ սուսպենզիաներ են (այսինքն

ջուր, վորի մեջ կախված վիճակում դանազան նյութեր են լինում):

Նյութերը լինում են դուրալուծ, դժվարալուծ և չլուծվող:

ԽՆԴԻՐ. Դասավոր ստացեք վորոշ քանակություն ջուր պարունակող փորձանոթներ և նրանց մեջ լուծեցեք գաստովի տված դանազան պինդ նյութերը: Այն փորձանոթների մեջ, վորտեղ նյութերն ամբողջովին լուծվեցին, դարձյալ նույն նյութերից քիչ-քիչ ավելացրեք այնքան, մինչև վոր նրանք դադարեն լուծվել: այդ գործողության ժամանակ լուծույթները պետք ե միշտ թափահարել:

Այն փորձանոթները, վորոնց մեջ նյութերն ամբողջապես չեն լուծվել, տաքացրեք մինչև յեռալը (բայց չեռացնեք) և չեթե նյութը լուծվի, նորից նյութ ավելացրեք: Տաքացրած լուծույթները պակեցրեք ու դիտեցեք հետևանքը:

Բնորոշեցեք ձեզ տված նյութերի լուծելիությունը (լավ լուծվողներ, դժվար կամ քիչ լուծվողներ և չլուծվողներ):

Այն նյութերը, վորոնք թե թափահարելով և թե տաքացնելով չլուծվեցին, կարելի՞ չե համարել չլուծվող նյութեր: Գուցե նրանք, թեև աննշան չափով, լուծվում են: Ինքներդ մտածեցեք, թե ինչպես պետք ե լուծել խնդիրը: Այն լուծույթը, վորի մեջ տվյալ նյութը տվյալ ջերմաստիճանի տակ աչլես չի լուծվում, կոչվում ե հազեցրած լուծույթ:

Բարեխառնություն բարձրացման հետ միաժամանակ մեծանում ե նաև կարծր նյութերից շատերի լուծելիությունը:

Տվյալ նյութի լուծելիությունը տվյալ բարեխառնության տակ կարելի չե ընորոշել նյութի գրամների այն քանակով, վոր ընդունակ ե լուծվել 100 գ լուծիչի մեջ: Այդ թիվը կոչվում ե լուծելիության գործակից կամ ուղղակի տվյալ նյութի լուծելիություն:

Տարբեր նյութերի լուծելիությունը չափազանց տարբեր ե: Այսպես՝ 100 գ ջրի մեջ  $20^{\circ}$ -ում կարող ե լուծվել՝ 300 գ շաքար, 36 գ կերակրի աղ, 31 գ ալբորակ, 23 գ պղնձարջասպ, 0,2 գ դիպս և այլն:

Լուծելիության մեծացումը տաքացումից, տարբեր նյութերի համար տարբեր ե: Աղբորակի լուծելիությունը զգալի չափով ե մեծանում, իսկ կերակրի աղինը՝ շատ քիչ:

Բացի ջրից ուրիշ հեղուկներ ել կարող են լուծիչ լինել: Այսպես, որինակ՝ դանազան ճարպեր լավ լուծվում են բենզոլին:

մեջ, խեժերը — սպիրտի և սկիպիդարի մեջ, մի քանի մետաղներ՝ սնդիկի մեջ և այլն: Այստեղ պետք է նկատել այն, վոր յեթե նյութը լավ լուծվում է մի լուծիչի մեջ, նա կարող է բոլորովին չլուծվել մի ուրիշ լուծիչի մեջ: Բոլորին հալանի չե, վոր բենզոլի մեջ լավ լուծվող ճարպերը ջրում բոլորովին չեն լուծվում: Ծարպերի և յուղերի լուծվելը բենզոլի մեջ գործնականում ողտադործում են բժեր հանելու համար: Խեժերի լուծվելը սպիրտի մեջ ողտադործում են լաքեր և ջնարակներ (ПОЛЯТУРА) պատրաստելու համար և այլն:

Այն նյութերը, վորոնց լուծելիությունը տաքացնելուց մեծանում է, լուծույթը սառեցնելու ժամանակ նորից անջատվում են բյուրեղների ձևով — բազմանիստների, այնպիսի մարմիններ ձևով, վորոնք սահմանափակվում են հարթ մակերևույթով:

▲ Փորձ 1. Սուրբ բյուրեղներ ստանալու համար 13 սմ<sup>3</sup> ջրի մեջ (կուրում) տաքացնելով, լուծեցեք 10 գ աղբորակ: Տաք լուծույթն անցեք բաժակի մեջ և թղթով ծածկելով, թողեք դանդաղ սառի, բաժակի հատակին ստացվում են սուրբ պրիզմայածե բյուրեղներ: ▲

▲ Փորձ 2. Պատրաստեցեք սովորական բարխառնություն մեջ հազեցած կիրակրի աղի լուծույթ: Յերբ աղը դադարի լուծվել, լուծույթը տաքացրեք: Դուր չեք նկատի, վոր լուծելիությունն զգալի չափով մեծանում է: Ստուգելու համար սուղակի վրայից լուծույթը մի բաժակի մեջ անցեք ու թողեք սառի: Շատ քիչ բյուրեղներ են ստացվում:

Բաժակը սառեցվող հեղուկով թողեք մի քանի օր: Ջուրն ստիճանաբար կտրոջխանա, անջատվող բյուրեղները թիվը կախկանա, և նրանք կմեծանան: ▲


Հազեցած լուծույթից նյութը կարող է անջատվել վոր միայն սառեցնելու ժամանակ, այլև լուծիչը գոլորշիացնելու ժամանակ:

Մրանով ողտվում են աղի լճերից ու ծովերից աղ ստանալու համար: Ջուրը գոլորշիացնում են մեծ, հարթ ամանների մեջ:

Լուծելու նյութերը լուծելով և լուծույթից նորից անջատելով, ողտադործում են լաբորատորիաներում՝ լուծվող նյութերը չլուծվողներից բաժանելու համար:


Ե և յ ի. Փորձեցեք մաքրել կերակրի վոչ մաքուր աղը չլուծվող Խոնորդներից: Մասեցեք ախառանքը ընթացքի մասին ու խորհրդակցեցեք դասավիճակ:

Լուծույթից միանգամից մեծ քանակությամբ բյուրեղներ անջատվելու դեպքում՝ նրանք կարծեք թե խանդարում են իրար աճելու և սաացվում են վոչ լրիվ բյուրեղներ: Բայց չեք ընտրում են լրիվ կաղձակերպված բյուրեղներից մեկը, անջատելով մյուսներից, ու տեղավորում համապատասխան նյութի հազեցած լուծույթի մեջ, որին սակ՝ թղթից կախելով (նկ. 19), այն ժամանակ նյութը զլխավորապես անջատվում է կախված բյուրեղի վրա: Բյուրեղն ստիճանաբար ու միանգամայն համաչափ մեծանում է պահպանելով իր սկզբնական ձևը:



Յերբ բյուրեղի ճիշտ աճմանը վոչինչ նկ. 19. Բյուրեղի անուրջի խանդարում, աղը դեպքում նա բոլոր կողմերից սահմանափակվում է հարթ մակերեսներով, նիստերով, ընդ վորում յուրաքանչյուր չերկու նիստի միացումը միմյանց հետ սվլալ նյութի համար առաջ է բերում մշտական ու վորոշակի չերկնիստ անկյուններ:

Բյուրեղային յուրաքանչյուր նյութի համար բնորոշ հատկանիշը նրա բյուրեղի ձևն է: Որին սակ՝ կերակրի աղը բյուրեղանում է խորանարդի ձևով (նկ. 20a), պաղլիղը՝ ոկտաեդրի ձևով (նկ. 20b), աղբորակը՝ պրիզմայի ձևով (նկ. 20b), անգլիական (կամ կծու) աղը՝ նուսնպես պրիզմայի ձևով (նկ. 20r), պղինձաղջասպը՝ բոլորովին այլ պրիզմայի ձևով (նկ. 20d):




Նկ. 20. Բյուրեղների ձևեր:

Բյուրեղների ձևը պատահական լինելու բան չի: Ատոմները և մոլեկուլները բյուրեղային մարմիններ առաջացնելով՝ տարածություն մեջ դասա-

վորվում են վորոշ կարգով: Մի շարք որինաչափություններ կարելի չե դանել, վորոնց չենթարկվում են բյուրեղների ձևերը, և բյուրեղները կարելի չե բաժանել մի քանի վորոշակի «սիստեմների»: Բյուրեղների ուսումնասիրությամբ զբաղվում և բյուրեղագիտությունը:

Բացի արաաքին ձևից, բյուրեղներն ունեն նաև այլ բնորոշ հատկություններ: Այսպես, բյուրեղային նյութն իր բոլոր մասերում քիմիական համասեռ լինելով՝ տարբեր ուղղություններով ֆիզիկական տարբեր հատկություններ ունի: Բյուրեղների այդ առանձնահատկությունը բացատրենք որինակով: Յենթադրենք, վոր բյուրեղներից մեկից միատեսակ մեծության մի քանի ձողիկներ (առանցքներ) են կտրված, բայց այնպես, վոր նրանց ուղղությունները բյուրեղի մեջ իրար հասկելով տարբեր անկյուններ են կազմում (նկ. 21): Այդ առանցքների հետադոտությունը ցույց և տվել, վոր նրանք կտրվում են վոչ միատեսակ հեշտությամբ և տարբեր անկյուններով, ունեն սպտիկական տարբեր հատկություններ, տարբեր ջերմհաղորդականություն և այլն:



Նկ. 21. Կերակրի աղի բյուրեղից կտրած ձողիկներ:

Շատ բյուրեղներ տարբեր ուղղությունների տարբեր հատկությունները խիստ կերպով արտահայտվում են այսպես կոչվող գոդվածություն (սերտ կապի) մեջ: Այդ առանցքները հեշտությամբ ճեղքվում են վորոշակի մի քանի ուղղություններով: Այսպես, որինակ՝ քարաղի կտորը կտրելիս նա միշտ ճեղքվում և իրար ուղղահայաց հարթություններով այնպես, վոր ստացված կտորները սովորաբար լինում են զուգահեռանիստի ձևով: Զոդվածություն սքանչելի որինակ և հանդիսանում փայլաուր, վորն, ինչպես հայտնի չե, հեշտությամբ բաժանվում և բարակ թերթիկների:

Բյուրեղների նկարագրած հատկությունների հիման վրա, նյութը մենք կարող ենք կոչել բյուրեղային և այն դեպքում, չիքը նա չունի բյուրեղի ձևվեր:

Այն նյութերը, վորոնց մեջ բյուրեղների հատկանիշներ մենք հայտնաբերել չենք կարող և վորոնց հատկությունները

բոլոր ուղղություններով միատեսակ են, կոչվում են վոչ բյուրեղային կամ ամորֆ (հունարեն «ամորֆոս» բառից, վոր նշանակում և անձև): Ամորֆ նյութերի որինակներ կարող են ծառայել՝ ալյակին, ցելյուլոզը, ժելատինը, խեժը, դոմիարաբիկը և այլն:

Ապահու կտորին արհեստականորեն կաշելի չե խորանարդի ձև տալ և հղիել նրա յեղբերը: Մյուս կողմից հարթ մակերեսներից կարելի չե զրկել աղի բյուրեղը, որինակ, նրան գնդի ձև տալով: Բաց և այնպես հեշտ և տաքբերել, վոր առաջին դեպքում, չնայած բյուրեղի արաաքին ձևին, մենք ունենք ամորֆ նյութ, չեբկորդ դեպքում—բյուրեղային նյութ: Հարվածից ապակե խորանարդը կճեղքվի անձև կտորների, այն ինչ կերակրի աղից շինված դուշը կճեղքվի միանգամայն վորոշ ուղղություններով՝ տալով զուգահեռանիստ ճիշտ ձևի կտորներ:

Բավականին շատ նյութեր կան, վորոնք հայտնի չեն թե վորպես ամորֆ և թե վորպես բյուրեղային նյութեր: Այդ պատճառով ել ստում են, վոր նյութերը կարող են լինել թե ամորֆ և թե բյուրեղային դրության: Այսպես, մեզ ծանոթ պղինձը սիդի սև փոշին ամորֆ դրության նյութ և: Նույն այդ ոքսիդը բնության մեջ պատանում և բյուրեղային ձևով, այսպես կոչվող պղինձի սև հանքի ձևով: Հանգած կիրը սովորաբար ստացվում և ամորֆ դրությամբ, բայց կարելի չե ստանալ նաև փայլող խորանարդաձև բյուրեղներով:

Բյուրեղներ կարելի չե ստանալ վոչ միայն լուծույթներից, այլ և հեղուկ նյութերը սառելուց (սառույցը բյուրեղային նյութ և, հարված մետաղները սառելիս առաջացնում են բյուրեղային կառույցվածք ունեցող դանդված), մի քանի նյութերի դուրընիները սառեցնելիս և քիմիական մի քանի ուսակցիաների ժամանակ:

Ներուկներ կարող են լուծվել այլ հեղուկների մեջ կամ ամեն հարաբերությամբ, ինչպես սպիրտը և ջուրը, նավթը և բենզինը և այլն, կարող են բոլորովին շլուծվել, ինչպես սնդիկը և ջուրը, յուղը և ջուրը, կամ վորոշ դեպքերում լուծվում են վոչ ամբողջությամբ. դրանց վրա մենք կանք չենք առնի:

▲ Փ ո Ր Յ. Ջուրը յուղի հետ թափահարեցեք և ապա թողեք հանգիստ դրությամբ: Մուրը բարձրանում և ջրի յերեսը: ▲



Վորպեպի համոզվեք, վոր գազերը լուծվում են ջրի մեջ, հետևյալ փորձը կատարեցեք:


▲ Փորձ 4. Փորձանոթն ամբողջովին լցրեք ջրով և կամ ջրով և գլխիվայր իջեցրեք ջրով լե բաժակի մեջ ու տաքացրեք փորձանոթի վերին մասը (չեռացնել), ինչպես այդ ցույց է արված 22-րդ նկարում: Փորձանոթի վերևի մասում հավաքվում են ջրից անջատվող ոչի պղպղակները:

Տաքացնելուց գազերի լուծելիությունը փոքրանում է, իսկ ստեղծվելուց՝ մեծանում: Վորքան փորձի համար վերցրած ջուրը սառը լինի և վորքան ուժեղ տաքացնեք, այնքան էլ շատ գազ կանջատվի նրանից:

Յեռացնելու միջոցով ջրից կարելի չէ հեռացնել նրա մեջ լուծված բոլոր գազերը: ▲

Ջրում լուծված ողորվ շնչում են ձկները: Նրանք ջուրն անընդհատ անց են կացնում խոտիկների միջով, վորոնք փրկաբինում են թռքերին:

Գազերի լուծելիությունը ջրում մեծանում է, յերբ մեծանում է այդ գազի վրա յեղած ճնշումը: Լիմոնադ, սիարո և այլ խմիչքներ պատրաստելիս, շշի մեջ ամխաթթու գազը մզում են ճնշման տակ. ամխաթթուն լուծվում է ջրի մեջ բավական մեծ քանակությամբ: Շշի բերանը բացելիս գազի վրա յեղած ճնշումը փոքրանում է, հավասարվում է մթնոլորտային ճնշման, և ջրում լուծված գազը ֆշշալով անջատվում է լուծույթից:



Նկ. 22. Ջրից նրա մեջ լուծված ողի անջատելը:


4. Ջրի բաղադրությունը: Վորեն նյութ ուսումնասիրելիս կարևոր հարցերից մեկը նրա բաղադրությունն է, այն է՝ բյուրեղ է այդ նյութը, թե՞ պարզ, այսինքն կարելի՞ չէ այդ նյութը տարրալուծել կամ ուրիշ նյութերից ստանալ, թե՞ վոչ:

Ջուրը բարդ նյութ է և կարելի է ասարալուծել ելեկտրական հոսանքով:

Մաքուր ջուրն ելեկտրական հոսանք համարյա չի անցկացնում (26 էջ): Այդ պատճառով էլ փորձի համար վոչ թե մաքուր ջուր են վերցնում, այլ վորեն նյութի լուծույթ, վոր այս փորձի ժամանակ մնում է լուծույթում նույն քանակությամբ, ինչ քանակությամբ վոր վերցված է յեղել սկզբում, և քիմիապես չի փոխվում (ծծաթթվում, կծու նաար, կիթ, սոդա):


Այդ փորձը կատարելու գործիքը պատկերված է 23-րդ նկարում:

Յեթե բաց թողնեք հոսանքը, այն ժամանակ ելեկտրոդները, ջրում յեղած թիթեղները կսկսեն ծածկվել գազերի պղպղակներով, վորոնք բարձրանալով վեր, հավաքվում են ելեկտրոդների վրա դրված փորձանոթների մեջ: Փորձանոթներից մեկի մեջ հավաքված գազի ծավալը յերկու անգամ մեծ է, քան մյուս փորձանոթի գազի ծավալը: Դյուրին է համոզվել, վոր ստացած գազերը տարբեր են և տարբերվում են ողից: Առկայծող մարխը մոտեցնելով քիչ գազ պարունակող փորձանոթի բերանին, մենք նկատում ենք, վոր առկայծող մարխը բոցավառվում է: Այդ գազը մեղ ծանոթ քրվածինն է: Մյուս գազն այրվում է, կարելի է վառել: Այդ գազը ջրածինն է:



Նկ. 23. Ելեկտրական հոսանքով ջուրը սարալուծելու գործիք

Ջրի տարրալուծման ռեակցիան կարելի է արտահայտել հետևյալ հավասարությամբ՝



Այսպես ուրեմն ջուրը բարդ նյութ է: Ջուրը տարրալուծելիս ստացվում է յերկու ծավալ ջրածին և մի ծավալ քրվածին:


Վոր իրոք ջուրը բարդ նյութ է, կարելի է հետեցնել վոչ միայն այն փորձի հիման վրա, վորով նրա միջով ելեկտրական հոսանք են անցկացնում, այլև ջրի և մի քանի մետաղների միջև տեղի ունեցող ռեակցիաների հիման վրա:

▲ Փորձ 5. Փորձանոթի մեջ, վորը պարունակում է 1—2 սմ<sup>3</sup> (տորանաբոստանի մեջ) ջուր, պեղել կալթիում մետաղի խարուք և անջատվող գազը փորձեցեք վառվող մարխով: Այդ ջրածինն է. կատակոսեք փոխադրեն ինչ ուղիտալ:

Նյութ ստացվեց: Այդ նյութը սովորական հանգամ կիրև է. փորձով գուր հեշտությամբ կհամոզվեք այդ բանում: Այդ փորձանոթի մեջ քիչ ջուր ավելացրեք, ուժեղ թափահարեցեք և առաջ լուծույթը քամեցեք մի ուրիշ փորձանոթի մեջ: Վորպեսզի համոզվեք, վոր քամած այդ լուծույթը կրաջուր է այսինքն, կրե լուծույթ ջրն մեջ, խողովակով փչեք նրա մեջ ձեր արտաշնչած ոդը: Ջուրը պղտորվում է:  $\Delta$

Կիրը բարդ նյութ է: Նրա բաղադրությունը մեջ մտնում է կալցիում մետաղը, վորով մենք ներգործեցինք ջրի վրա:


Կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող սեռակցիան կարելի է արտահայտել այսպես՝



Վոր իրոք ջուրը բարդ նյութ է, առաջին անգամ ապացուցեց ֆրանսիացի հայտնի գիտնական Ա. Լավուազյեն (Lavoisier, 1743—1794) 18-րդ դարի վերջում:

Լավուազյեն գիտեց նաև մետաղի ու ջրի միջև տեղի ունեցող սեռակցիան, բայց նա վոչ թե կալցիում վերցրեց, վորն այն ժամանակ դեռ հայտնի չէր, այլ յերկաթ, վորը սեռակցիայի մեջ է մտնում ջրի հետ միայն շիկացրած ժամանակ: 24-րդ նկարում ցույց է արված Լավուազյեի գործիքը:

A սեռորում յեռացող ջրի գոլորշիներն անց կլին կենում շիկացրած յերկաթյա B խողովակի միջով: Յերկաթի և ջրի միջև




Նկ. 24. Լավուազյեի գործիք՝ ջուրը սարքայունելու համար:

տեղի ունեցող սեռակցիայի հետևանքով անջատվող ջրածինը հավաքվում էր C անոթի մեջ: Յերկաթի հետ սեռակցիայի մեջ չմտած ջրի գոլորշիները ստուգվում էին D սառնարանում, իսկ ջուրը հավաքվում էր E անոթի մեջ:

Լավուազյեն հայտարարեց, վոր յերկաթյա խողովակը ներսից ծածկվում է սև շերտով: Այդ շերտը՝ թթվածնի և յերկաթի միացությունն է:


Ջրի և յերկաթի միջև տեղի ունեցող սեռակցիան կարելի է պատկերացնել այսպես.



Ջրի և մետաղի միջև տեղի ունեցող սեռակցիան միացման սեռակցիա չէ, վորի ժամանակ յերկու նյութերից ստացվում է մի նյութ և վոչ ել վերլուծման սեռակցիա, վորի ժամանակ մի նյութից ստացվում են յերկու և ավելի նոր նյութեր:

Մենք վերցնում ենք յերկու նյութ—ջուր և մետաղ, և ստանում ենք յերկու նոր նյութ—մետաղօքսիդ և ջրածին: Մեզ համար նոր տիպի այս սեռակցիան կոչվում է փոխարկման սեռակցիա:

Ջրի և յերկաթի միջև կատարվող սեռակցիան կարելի է պատկերել ավելի դնական ձևով, ջրի և մետաղօքսիդի բաղադրության մասերն առնելով ջրջանակներին մեջ.



Յերկաթը ջրի մեջ փոխարինում է նրա ջրածնին, գրավում է նրա տեղը—առաջացնելով յերկաթօքսիդ, իսկ ջրածինն անջատվում է ազատ վիճակում:

Բացի կալցիումից ու յերկաթից, կան ուրիշ մետաղներ, վորոնք սեռակցիա չեն տալիս ջրի հետ, ինչպես մագնեզիումը և ցինկը: Բայց կան մի ամբողջ շարք մետաղներ, վորոնք ջրի հետ նման սեռակցիա չեն տալիս, որինսակ՝ պղինձը, սնդիկը, արծաթը: Պարզության համար մենք այստեղ չենք նշում, վոր ջրածնի մի մասը մնում է հանդած կրի բաղադրության մեջ:

#### ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՀՄՐՅՆԻՐ

1. Ինչպես դեռ է վորոշել ջրի սովոր կազմը մեջ:
2. Ջուրը յերկրի մակերեսի վոր մասն է կազմում:
3. Ինչ խառնուրդներ են ունենում բնական ջրերը:
4. Ինչու վորոշ տեղերում չէ կարելի հում ջուր խմեց:

5. Ինչից և առաջանում կախանիքի կորկո
6. Աղբյուրի անզույն ու թափանցիկ ջուրը կարելի չէ համարել մաքուր
7. Ինչպես պետք է ստանալ միանգամայն մաքուր ջուր:
8. Հրդեհք մաքուր ջրի Ֆիզիկական հատկությունները:
9. Ինչ բան է հաղեցած լուծույթը:
10. Ինչպես պետք է համողվել, թե ավալ նյութը ջրում լուծվել չէ:

- Բե վոչ
11. Ինչ բան է լուծելիությունը:
  12. Ինչ դեպքում է լուծված նյութն անջատվում հաղեցած լուծույթից:
  13. Ինչ վիճակում է անջատված լուծված պինդ նյութը հաղեցած լուծույթից:
  14. Բյուրեղային նյութերն ինչով են տարբերվում վոչ բյուրեղայիններից. ինչպես են կոչվում վոչ բյուրեղային նյութերը:
  15. Գազերի լուծելիությունը ջրում ինչից է կախված:
  16. Գազերի լուծելիության վրա ջրում ինչպես է ազդում սառույթի ընթացումը և ինչպես՝ ճշգրտան բարձրացումը:
  17. Ինչպես կարելի է տարբարել ջուրը՝ Վերհեյդեք ջրի տարբարուման սեղանի վրա համարումը:
  18. Ջրի տարբարումումից առաջացած գազերը ծախսարևին ինչ հարաբերություններով են լինում:
կան անալիզը մեզ տալիս է միայն տարրերի կշռային և վոլ թե մոլեկուլի ատոմների քանակութ. յունը: Իսկ ըստ կշռային բաղադրության՝ ինչպես պետք է դտնել քիմիական ֆորմուլը: Այդ հարցը քննարկենք որինակով:

Ունենք վորևե գազ: Վորակական անալիզը ցույց է տալիս, վոր այդ գազը բաղկացած է ածխածնից և թթվածնից. քանակական անալիզը ցույց է տալիս, վոր այդ գազի մեջ 3 կշռամաս ածխածնին ընկնում է 8 կշռամաս թթվածին: Այդ գազի մոլեկուլը քանի՞ ատոմ ածխածնից և քանի՞ ատոմ թթվածնից է բաղկացած:

Յենթադրենք, վոր այդ գազի մոլեկուլի մեջ կա 1 ատոմ ածխածին, Ածխածնի 1 ատոմը 12 կշռամաս ածխածին է. 12 կշռամաս ածխածնին քանի՞ կշռամաս թթվածին կընկնի, յեթե 3 կշռամասին ընկնում է 8 կշռամաս:

Դատում ենք այսպես. յեթե 3 մաս ածխածնին ընկնում է 8 մաս թթվածին, այդ դեպքում մի մասին կընկնի 3 անգամ պակաս, այն է  $\frac{8}{3}$ , իսկ 12 մասին՝ 12 անգամ ավելի, այն է՝  $\frac{8 \times 12}{3}$

մաս: Կրճատելով՝ ստանում ենք  $8 \times 4 = 32$  մաս: Իսկ այդ քանի՞ ատոմ է կազմում: Թթվածնի ատոմական կշիռը 16 է, հետևապես կլինի  $32 : 16 = 2$  ատոմ, Նշանակում են՝ մեր վերցրած գազի մոլեկուլի մեջ մտնում են 1 ատոմ ածխածին և 2 ատոմ թթվածին, և նրա ֆորմուլը կլինի՝ CO<sub>2</sub>: Ածխաթթու գազն է այդ:

Բայց մենք միանգամայն կամայորեն յենթադրեցինք, վոր գազի մոլեկուլի մեջ պարունակվում է 1 ատոմ ածխածին: Իսկ ինչպե՞ս չենթադրել, վոր նրա մեջ կա մի ատոմ թթվածին: Այդ դեպքում այլ հետևանք չի՞ ստացվի արդյոք. վորձենք այդպիսի յենթադրություն անել: Այդ դեպքում մենք պետք է դատենք այսպես. 8 կշռամաս թթվածնին ընկնում է 3 կշռամաս ածխածին: Քանի՞ կշռամաս ածխածին կընկնի 1 ատոմ թթվածնին,

16 կշռամասին: Կընկնի  $\frac{3 \times 16}{8} = 6$  կշռամաս ածխածին: Վորովհետև հետև ածխածնի ատոմական կշիռը 12 չէ, այդ կազմում է ածխածնի ատոմի  $\frac{1}{2}$ -ը, վոր ընկնում է 1 ատոմ թթվածնին: Բայց

$\frac{1}{2}$  ատում չի կարող լինել: Ուրեմն 1 ատումին պետք է ընկնի վոչ թե  $\frac{1}{2}$  ատում, այլ 1 ատումին՝ 2 ատում: Այլ խոսքով՝ այդպես դասելով, ստացվում է  $\text{CO}_2$  ֆորմուլը: Նույն բանը կստացվի, յեթե մենք չենթադրենք, վոր մեր գազի մոլեկուլի մեջ կա 2 ատում ածխածին: Մենք կստանանք 24:64 հարաբերությունը, վորին համապատասխանում են 2 ատում ածխածինը և 4 ատում թթվածինը, իսկ ֆորմուլի համար մենք ընդունում ենք պարզ հարաբերություն, այն է 1:2 և վոչ թե 2:4, այսինքն ստանում ենք դարձյալ  $\text{CO}_2$ :

Քիմիական ֆորմուլները գտնելու հնարավորությունը հիմնված է այն բանի վրա, վոր վորևէ բարդ նյութի մեջ մտնող ատոմների հարաբերությունը, ինչ քանակությամբ էլ վոր նա լինի, պետք է լինի այնպես, ինչպես մի մոլեկուլի մեջ: Ածխածինը գազի մեջ ածխածնի հարաբերությունը թթվածնին՝ կլինի 12:32, իսկ անալիզը տալիս է 3:8 հարաբերություն: Պարզ է, վոր այդ հարաբերությունները հավասար են 12:32=3:8: Այսպիսով ֆորմուլն ըստ կշռային բաղադրություն գտնելու խնդիրը զուտ թվաբանական խնդիր է:

Քիմիական անալիզի հետևանքները սովորաբար արտահայտում են տոկոսներով: Այսպես, որինակ, մազնեղիումի այրումից ստացվող սպիտակ փոշին՝ մազնեղիում ոքսիդը պարունակում է 60% մազնեղիում և 40% թթվածին, այսինքն մազնեղիումի և թթվածնի կշռային քանակությունները լինում են 60:40 հարաբերությամբ:

Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր .


Գտեք հետևյալ նյութերի ֆորմուլները.

1. Մազնեղիումօքսիդի, վորի բաղադրությունը բերված է վերևում:
2. Ճահճալի գազի, վոր 75% ածխածին և 25% ջրածին է պարունակում:
3. Մի քանի թթվածնային միացությունների, վորոնցից մեկը պարունակում է 50% ծծումբ, 50% թթվածին, իսկ մյուսը՝ 40% ծծումբ և 60% թթվածին:
4. Մանգան հանքի, վոր պարունակում է 63,2% մանգան և 36,07% թթվածին:
5. Ազոտօքսիդի, վոր պարունակում է 25,93% ազոտ և 74,08% թթվածին:
6. Պոտաշի, վոր պարունակում է 56,52% կալիում, 8,7% ածխածին և 34,78% թթվածին:

7. Այն միացություն, վոր պարունակում է 2,04% ջրածին, 32,65% ծծումբ և 65,31% թթվածին:

8. Չիլիական սելիտը, վորը պարունակում է 27,2% նատրիում, 16,5% ազոտ և 56,3% թթվածին:

7. Մոլեկուլյար Ֆորմուլներ. Մեր քննարկած բոլոր որինականների ու խնդիրների մեջ ատոմների և մոլեկուլների միջև մենք պարզ հարաբերություններ ելինք տեսնում: Ածխածինը գազի ֆորմուլը մենք ընդունեցինք պարզ ձևով՝  $\text{CO}_2$ , և վոչ թե  $\text{C}_2\text{O}_4$  կամ  $\text{C}_2\text{O}_6$ , վորոնք նույնպես համապատասխանում են նյութի կշռային բաղադրության: Մեր բոլոր քննարկած որինականներում այն հենց այդպես էլ է: Բայց յերբեմն պատահում են այնպիսի նյութեր, վորոնց պետք է վերագրել վոչ թե պարզ ֆորմուլներ, այլ ավելի բարդ՝ կրկնապատկած, յեռապատկած և այլն: Վորպես որինակ կարող է ծառայել ջրածին պերօքսիդը, վորտեղ ջրածնի և թթվածնի հարաբերությունը 1:6 է, և նրա պարզ ֆորմուլը պետք է լինի  $\text{HO}$ , նկատի ունենալով այն հանդամանքը, վոր ջրածին պերօքսիդը քայքայվում է ջրի և թթվածնի, նրան կարելի չէ վերագրել  $\text{H}_2\text{O}_2$  և վոչ թե  $\text{HO}$  ֆորմուլը.




Կան և այլ հոսքամանքներ, վորոնց հիման վրա ջրածին պերօքսիդի մոլեկուլը պետք է վոր բաղկացած լինի յերկու ատոմ ջրածնից և յերկու ատոմ թթվածնից: Նման հանգամանքներն են ստիպում նաև, վոր քացախածին ֆորմուլը գրենք  $\text{H}_4\text{C}_2\text{O}_2$  և վոչ թե  $\text{H}_2\text{CO}$ , ացետիլեն գազի ֆորմուլը՝  $\text{H}_2\text{C}_2$  և վոչ թե  $\text{HC}$ , և վերջպես, հիմք կա ընդունելու, վոր մի քանի պարզ նյութեր, այսինքն տարրեր, ազատ վիճակում կարող են զոյություն ունենալ առանձին ատոմների ձևով, իսկ մյուսները՝ պարզ նյութի մոլեկուլի ձևով, մոլեկուլներ՝ բաղկացած յերկու կամ մի քանի միատեսակ ատոմներից: Վորոշ դեպքերում հնարավոր է լինում նույնիսկ վորոշ էլ այդ մոլեկուլների բաղադրությունը: Այսպես, որինակ՝ ջրածնի, թթվածնի, ազոտի, քլորի մոլեկուլները բաղկացած են 2-ական ատոմներից: Մոլեկուլները մենք կարող ենք պատկերել այսպես.  $\text{H}_2$ ,  $\text{N}_2$ ,  $\text{O}_2$ ,  $\text{Cl}_2$ : Չպետք է կարծել սակայն, վոր ամեն մի պարզ նյութի մոլեկուլ բաղկացած է յերկու ատոմից: Այդ վերաբերում է միայն սովորական գազներին և քիչ թվով այլ պարզ նյութերի, վորոնց վրա մենք այստեղ կանգ չենք առնում:

Այն ֆորմուլաները, վորոնք արտահայտում են բարդ և պարզ նյութերի մոլեկուլի բաղադրությունը, կոչվում են մոլեկուլայա-  
**Քումուլներ**: նյութերի մեծ մասը, վորոնց հետագայում մենք պետք է պատահենք, ունեն պարզ ֆորմուլ. այդ ֆորմուլը հենց նրանց մոլեկուլայար ֆորմուլն է՝ գտած կշռային բաղադրութան հիման վրա, իսկ  $H_2O_2$ ,  $C_2H_2$  և նման այլ ֆորմուլների մասին անհրաժեշտ է հիշատակել, վորպեսզի աշակերտները սխալ պատկերացում չունենան, վոր բոլոր նյութերն էլ պարզ ֆորմուլ պետք է ունենան: Իսկ այն հարցը, թե ինչպես պետք է գտնել մոլեկուլայար ֆորմուլները, բավական բարդ հարց է, և այն մենք այստեղ քննարկել չենք կարող: Մոլեկուլայար ֆորմուլները գտնելու յեղանակների մասին խոսվում է որպեսզի միջին մեջ:

**Տ. Քիմիական հավասարումներ.** ֆիմիական ֆորմուլների ոգնությունը կարելի է արտահայտել վոչ միայն բարդ նյութերի բաղադրությունը, այլև քիմիական ռեակցիաները, այնպես, ինչպես մենք արտահայտում եյինք բառերով: Տարբերությունն այստեղ միայն այն կլինի, վոր քիմիական հավասարումներ ֆորմուլներով արտահայտում են նյութերի վոչ միայն վորակական, այլև քանակական հարաբերությունները:

Օծմբի ( $S=32$ ) և յերկաթի ( $Fe=56$ ) միացման հավասարումը




ցույց է տալիս, վոր 56 կշռամաս յերկաթի հետ միանալով 32 կշռամաս օծմբը առաջանում է 56 + 32 = 88 կշռամաս օծմբերկաթ:


Բայց վորովհետև քիմիական հավասարումն արտահայտում է նյութերի կշռային քանակությունները, ապա այդ հավասարումը պետք է արտահայտի յեւլ կյութի կոնի պահպանման օրենքը: Յուրաքանչյուր տարրի ատոմների թիվը՝ հավասարութան նշանից դեպի աջ և դեպի ձախ պետք է նույնը լինի:

Վերցնենք մեզ օրինակ՝ կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիան: Այդ ռեակցիայի ժամանակ առաջանում են այսպես կոչվող հանդած կեր և ջրածին: Կալցիումի նշանն է  $Ca$ : Հանդած կերի անալիզը ցույց է տալիս, վոր նա բաղկացած է կալցիումից, թթվածնից և ջրածնից, և նրա ֆորմուլն է  $CaO_2H_2$ :

Ուրեմն կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիան մենք պետք է գրենք այսպես. հավասարման նշանից դեպի ձախ պետք է գրենք կալցիումը և ջուրը, իսկ դեպի աջ՝ հանդած կերը և ջրածինը:



Բայց այս ձևով գրված մեր հավասարումը հակասում է նյութի կշռի պահպանման օրենքին: Ձախից՝ ջրի բաղադրություն մեջ մենք ունենք յերկու ատոմ ջրածին, իսկ աջից՝ յերկու ատոմ ջրածին կրի բաղադրության մեջ և յերկու ատոմ հիդրոտ ջրածնի մոլեկուլի մեջ: Թթվածինը ջրի մեջ մի ատոմ է, իսկ կրի մեջ՝ յերկու ատոմ: Իսկ ինչպես գրենք այդ հավասարումը, վոր նա նյութի կշռի պահպանման օրենքին չհակասի: Մենք իհարկե չենք կարող  $H_2O$  ջրի ֆորմուլի փոխարեն գրել  $H_2O_2$ , վորովհետև այդ արդեն ջուր չի լինի, այլ իսրիշ նյութ: Պարզ է, վոր այսպես անել չի կարելի: Ահնայա մի ուրիշ նյութ: Պարզ է, վոր այսպես անել չի կարելի: Այդ նակցում է վոչ թե մի մոլեկուլ  $H_2O$  ջուր, այլ յերկու: Այդ մենք նշանակում ենք այդպես. ֆորմուլի առաջ գրում ենք յերկու թվանշանը՝  $2H_2O$ : Այս դեպքում յերկու մոլեկուլ ջրի մեջ հարկավոր կլինի 2 ատոմ թթվածին և 4 ատոմ ջրածին.



Այսպես գրելով՝ մենք ստանում ենք մի հավասարում, վորտեղ ձախ մասի յուրաքանչյուր տարրի ատոմների թիվը հավասար է աջ մասի նույն տարրի ատոմների թիվին:

Ձախ մասում կա 1 ատոմ  $Ca$ , աջ մասում նույնպես 1 ատոմ:

Ձախ մասում յերկու մոլեկուլ ջրի մեջ կա 4 ատոմ  $H$ , իսկ աջ մասում յերկու ատոմ  $H$  գտնվում է կրի մեջ և 2 ատոմ  $H$  (1 մոլեկուլ) ազատ վիճակում — ընդամենը 4 ատոմ:


Ձախ մասում յերկու մոլեկուլ ջրի մեջ կա 2 ատոմ թթվածին՝  $O$  — աջ մասում կրի մեջ կա 2 ատոմ թթվածին:

Այսպես, ուրեմն, հավասարումը ճիշտ է գրված:


Անհրաժեշտ է մի անգամ ես նշել, վոր հանդած կերի ֆորմուլը սովորաբար գրում են վոչ թե  $CaO_2H_2$ , այլ  $Ca(OH)_2$  և

կարգում են, կալցիում-ո-հաշ-յերկու անգամ: «Յերկու անգամ» («յերեք անգամ» և այլն) բառով այն ներուժյունն և արտահայտվում, վոր 2 (3 և այլն) վերաբերում և փակագծերի մեջ յեղած բոլոր ատոմներին: Յեթե ասելու լինենք՝ «կալցիում-ո-հաշ-յերկու», այդ կնշանակելը  $CaCO_2$  — մի նյութ, վոր գոյությունն չունի:


Ջննենք քիմիական հավասարում կազմելու մի որինակ եր Զրի գոլորշիների և յերկաթի մեջև կատարվող սեպիտայի ժամանակ ստացվում են յերկաթի սուլիդ և ջրածին (եջ 20): Յերկաթի սուլիդի անալիզը ցույց և տալիս, վոր նա ունի այս բաղադրությունը՝  $Fe_3O_4$ : Ռեակցիայի սխեման սկզբում մենք պետք և գրենք այսպես.



Այս հավասարումը դարձյալ չի համապատասխանում նյութի կշռի պահպանման որենքին, վորովհետև ջրածինի, թթվածնի և յերկաթի ատոմների թիվը հավասարման աջ և ձախ մասերում իրար հավասար չեն: Գտնում ենք այնպիսի ֆորմուլ, վորտեղ տարբեր ատոմների թիվը ամենից շատ և— $Fe_3O_4$  և նրանից ել սկսում ենք «հավասարեցնել»: Այլ մասում կա 3 ատոմ յերկաթի, ձախ մաս—1. յերկաթի ատաջը ձախ մասում գրում ենք 3.



Ապա հավասարեցնում ենք թթվածինը. աջ մասում թթվածնի ատոմների թիվը 4 և, հետևապես սեպիտային մասնակցում և չորս մոլեկուլ ջուր՝  $4H_2O$ : Չորս մոլեկուլ ջրի մեջ կա հարկավոր չորս ատոմ թթվածին. բացի այդ՝ նաև 3 ատոմ ջրածին: Այդքան ել ատոմ ջրածին պետք և լինի հավասարման աջ մասում, հետևաբար հավասարումն արտահայտվում և այս կերպ՝




Նման «հավասարեցում» կատարելն անհրաժեշտ և, չի թի հավասարման աջ մասը չի համապատասխանում ձախ մասին: Կարելի չի ճիշտ հավասարում կազմել միայն այն ժամանակ, յեթե մենք ստույգ գիտենք, թե սեպիտայի ժամանակ ինչ

նյութեր են ստացվում, և թե մենք նրանց ֆորմուլները ճիշտ ենք գրել՝ համաձայն նրանց բաղադրության:

Յեթե բոլոր նյութերի ֆորմուլները ճիշտ են գրված, այդ դեպքում խոսք կարող և լինել միայն սեպիտային մասնակցող և սեպիտայից հետո ստացվող նյութերի մոլեկուլի քվի մասին: Անկասկած՝ բոլոր նյութերի մոլեկուլների թիվն այնպես պետք և լինի, վոր հավասարումը չհակասի նյութի կշռի պահպանման որենքին:

«Հավասարեցնել» բառի փոխարեն հաճախ ասում են—«գործակիցներ գնել»:


Մանքուրյուն. Գիմիական հավասարումները յերբեմն կոչվում են «քիմիական հավասարումներ», հավասարության նշանի փոխարեն մի քանի գրքերում գնում են սլաք →. որինակ՝




Յեզրփակելով մեր բոլոր ասածները՝ մտաբերենք քիմիական այն բոլոր սեպիտայները, վոր մենք կատարեցինք կամ նկարագրեցինք, բայց չգրեցինք քիմիական հավասարությունների ձևով: Այդ սեպիտայները բերված են ստորև՝ սխեմաների ձևով, առանց գործակիցների, ուստի և հավասարության փոխարեն գրված են դիվիդենտ:

Այդ սխեմաները պետք և արտագրել տետրի մեջ և գնել գործակիցները:


Պլինձոքսիդի ստաջացումը՝




Անագոքսիդի ստաջացումը՝



Կրաջրի պղտորումը՝ նրա վրա անալիթիկ դաղով ազդելու



Մնդիկոքսիդի տարրալուծումը՝





Նման լեղանակով կարելի չե վճռել նաև մի շարք խնդիրներ: Որինակ՝ ունենք 20 տոնն անագի հանք—«անագաքար»  $\text{SnO}_2$  բաղադրությամբ: Այդ հանքից քանի՞ տոնն անագ կարելի չե ձուլել:

Անագի ատոմական կշիռն է՝ 119:  $\text{SnO}_2$ -ի մոլեկուլային կշիռը կլինի՝  $119 + 16 \times 2 = 119 + 32 = 151$ :

Կազմում ենք համեմատություն.

$$x : 20 = 119 : 151, \text{ այստեղից՝ } x = \frac{20 \cdot 119}{151} = 15,8 \text{ տոնն:}$$

**Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ**

Հարկեցեք տանորդական կոտորակներով և վճռեցեք մեկ տասնորդական նշանի ճշտությամբ.

1. Ինչքան կապար կարելի չե ստանալ 478 տոնն կապարափայլից, վորն ունի  $\text{PbS}$  բաղադրություն:

2. Քանի կիլոգրամ ցինկուլֆիդից՝  $\text{ZnS}$  կարելի չե ստանալ 25 կիլոգրամ ցինկ:

3. Վճռեցեք, թե յերկաթահանքից վորն է ավելի հարուստ յերկաթով՝ դորը յերկաթաքար՝  $\text{Fe}_4\text{O}_9\text{H}_3$ , թե՛ մագնիսական յերկաթաքար՝  $\text{Fe}_3\text{O}_4$ :

4. Կարժիր յերկաթաքարից՝  $\text{Fe}_2\text{O}_3$  պետք է ձուլել 200 տոնն յերկաթի ֆանի վազոն և հարկափոր, վոր պահանջվող քանակությամբ յերկաթահանքը բերվի դոմնն վառարանի մոտ Յուրաքանչյուր վազոնի տարողությունը = 15 տոննի:

Նման խնդիրները կարելի չե վճռել և սեակցիաների հավասարումների հիման վրա Որինակ՝ քանի գրամ ջուր կստացվի, յեթե ջրածնով վերականգնենք 32,8 գրամ պղնձօքսիդ՝  $\text{CuO}$ :

Գրում ենք սեակցիայի հավասարությունը.




Հավասարումից մենք նկատում ենք, վոր պղնձօքսիդի մի մոլեկուլը, այսինքն  $64 + 16 = 80$  կշռամասը, սեակցիայի ժամանակ տալիս է մի մոլեկուլ, այսինքն  $2 + 16 = 18$  կշռամաս ջուր: Կազմում ենք համեմատություն. 18-ն այնքան անգամ մեծ է x-ից, վորքան անգամ 80-ը մեծ է 32,8-ից, կամ՝

$$18 : x = 80 : 32,8, \text{ վորտեղից}$$


$$x = \frac{32,8 \cdot 18}{80} = 7,38 \text{ գր:}$$

Հարմար և դասավորել այսպես.




Կարգում ենք. 80 գր պղնձօքսիդը տալիս է 18 գր ջուր 32,8 գրամը տալիս է x: Այստեղից կազմվում է հետևյալ համեմատությունը՝  $80 : 32 = 18 : x$ :

Յեթե խնդիրը պղնձի քանակին վերաբերեր, այդ դեպքում հաշվումները պետք է դասավորեյինք այսպես.



Յեթե խնդիրը դրվեր այնպես, թե քանի՞ գրամ պղնձօքսիդ պետք է վերցնել, վոր սեակցիայի ժամանակ ստացվեր 7,38 գր ջուր, այդ դեպքում խնդիրը կլուծվեր այսպես.



Համեմատություն կազմելու փոխարեն, կարելի չեր դատել այսպես.


80 գր պղնձօքսիդը տալիս է 18 գր ջուր: Վորպեսզի 1 գր ջուր ստացվի, պետք է վերցնել վոչ թե 80 գր պղնձօքսիդ, այլ 18 անգամ պակաս, այսինքն  $\frac{80}{18}$ , իսկ վորպեսզի ստանանք վոչ թե 1 գր, այլ 7,38 գր ջուր—պետք է վերցնել 7,38 անգամ աս վելի.

$$\frac{80 \cdot 7,38}{18} \text{ գր}$$

Կատարելով գործողութիւնը՝ մենք կստանանք փնտրած արդիւնքը:

Քիմիական զանազան փորձերի ու հաշիւարկները ժամանակ շատ հաճախ նյութերը քանակութիւնները կամայորեն վերցրած կշռային մասերով հաշիւելու փոխարեն ոգտվում են գրամովելուլ յիվ գրամացում հասկացողութիւններով: Այդ հասկացողութիւնները նշանակում են նյութի ատոմի կամ մոլեկուլի կշռային քանակութիւնները գրամներով: Ծծմբաթթվի՝ H<sub>2</sub>SO<sub>4</sub> գրամմոլեկուլը կլինի—2+32+64=98 գրամ ծծմբաթթու: Յինկի գրամատոմը կլինի 65 գր ցինկ:

Յեթե գործնականում հարկավոր է լինում վորևե ունակցիտ կատարել, ամենից հարմար է նյութերը գրամներով կշռել: Մի գրամմոլեկուլ ծծմբաթթու և մի գրամատոմ ցինկ վերցնելով՝ մենք գիտենք, վոր




ունակցիտ ժամանակ վոչ ցինկ կմնա և վոչ էլ ծծմբաթթու, այլ կստացվեն միայն ցինկարջասպ և ջրածին:

Յերբմն ասում են—գրամմոլեկուլային կշիւ, կամ կրճատ՝ մոլոր կիւռ: Գրամմոլեկուլին կրճատ ձևով ասում են մոլ:


Ամբողջ գրամմոլեկուլ վերցնելու փոխարեն աշխատանքի ժամանակ կարելի է վերցնել գրամմոլեկուլի մասերը, որինակ՝  $\frac{1}{2}$  մոլ, 0,1 մոլ և այլն:

### Ն Ն Դ Ի Բ Ն Ե Բ


1. Քանի կելողրամ յերկաթ պետք է վերցնել, վորպէս ստացվի 20 կելողրամ ծծմբերկաթ: Ռեակցիայի հավասարումն է՝ Fe+S=FeS;
2. 50 գր ցինկի միջոցով ծծմբաթթվից դատած ջրածին, այրումից քանի գրամ ջուր կստացվի: Ռեակցիաների հավասարումներն են՝



3. 200 գր մալքիտի շիկացումից քանի գրամ պղնձորսիզ կստացվի: Ռեակցիայի հավասարումն է՝




4. Ինչքան մալքիտ պետք է քայքայել, վոր 10 գրամ ջուր անջատվի;
5. Մալքիտի քայքայման ժամանակ անջատվել է 25 գր ջուր և ածխաթթու գազ: Ինչքան մալքիտ է վերցված յեղել;
6. Կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ ստացվել է 10 գր ջրածին: Ինչքան կալցիում է վերցված յեղել: Ռեակցիայի հավասարումն է 101-րդ էջում:
7. Ուղադարիկի տարողութիւնն է 100 մՅ, մի խորանարդ մետր ջրածինը կշռում է 0,09 կգ: Ինչքան ծծմբաթթու և ցինկ պետք է վերցնել՝ այդ ուղապարիկը ջրածնով լցնելու համար:
8. Բարիումպերքսիդի BaO<sub>2</sub> և ծծմբաթթվի H<sub>2</sub>SO<sub>4</sub> միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ ստացվում է ջրածին պերքսիդ ըստ հետևյալ ռեակցիայի՝



Քանի գրամ բարիում պերքսիդ պետք է վերցնել 340 գ ջրածին պերքսիդ ստանալու համար:

9. Քանի գրամ բերտիլիտայն աղ պետք է վերցնել նորմալ պայմաններում 134,4 լ թթվածին ստանալու համար: Ռեակցիայի հավասարումները հետևյալն է.



Նորմալ պայմաններում մեկ լիտր թթվածինը կշռում է 1,43 գ:

10. Քիմիական յեզու. Քիմիական ֆորմուլները և հալմասարումները չափազանց կարճ, հասկանալի ու զննական կերպով արտահայտում են նյութերի վորակական ու քանակական բաղադրութիւնը և նրանց հետ կատարվող յերեւոյթները:

Ֆորմուլների և հալմասարումների դիտողականութիւն շնորհիվ նրանք հեշտութիւնք պահվում են հիշողութիւնք անհնար ինչ նյութերի տեղի ունեցող բաղադրութիւնը հիշողութիւնք անհնար պահելն անմաստ բան կլինի:

Քիմիական նշանները կամ «սիմվոլներ» հիմքում բերցելիւն ընդունում էր տարրերի յատիւնական և հունական անունները, աչինքն հին յեզուների անունները, վորոնցով ժամանակակից և վոչ մի ժողովուրդ չի յոսում: Շնորհիվ այդ բանի, քիմիական նշանները «թարգմանելու» պետք չկա: Նրանցով ոգտվում են բոլոր յերկրների և ժողովուրդների քիմիկոսները: Այսպիսով քիմիական ֆորմուլները և հալմասարումները քիմիա-




կան ինքերնացիոնայ հատուկ լեզու յեն՝ միտառեսակ հասկանալի յուրաքանչյուր քիմիկոսի, ինչ աղգության ել վոր նա պատկանելու լինի:


**ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՀՅՐՑՅԵՐ**

1. Մտորե բերված հավասարումներում գործակիցներ դրեք և արտադրեցեք ձեր տեսարակներում:


ա) Ջրի առաջացումը կապարդիոքսիդի և ջրածնի միջև տեղի ունեցող սեակցիայի ժամանակ.




բ) Ցինկի և աղաթթվի միջև տեղի ունեցող սեակցիայի ժամանակ.



գ) Ալումինումի և ջրի միջև տեղի ունեցող սեակցիայի ժամանակ.



դ) Մալաքիտի և աղտաթթվի միջև տեղի ունեցող սեակցիայի ժամանակ.



2. Ինչո՞վ են տարբերվում պարզ և բարդ նյութերն իրենց մոլեկուլի բաղադրության տեսակետից:

3. Մտաբերեցեք ողորհ հատկությունները:

4. Ի՞նչ բաղադրություն ունի թթվածնի և ողորհ մոլեկուլը:

5. Ի՞նչ տարբերություն կա «ատոմի կշիռ» և «ատոմական կշիռ» հասկացությունների մեջ:

6. Ի՞նչու Իսլաոնն ատոմական կշիռները վորոշելու համար վորպես միավոր ընդունում են ջրածնի կշիռը:


7. Ի՞նչ է մոլեկուլային ֆորմուլը:

8. Ատոմական ուսումնքն ի՞նչ որոնքներ են բացատրում:

9. Հիշեցեք քլորի մոլեկուլայն ֆորմուլը:

10. Գտեք այն նյութի ֆորմուլը, վոր պարունակում է 82,250/0 ազոտ և 17,750/0 ջրածին:


11. Գործարանում տարեկան 190.000 տոնն քարածուխ են այրում: Որական քանի տոնն ածխաթթու գազ է բաց թողնվում ող, յեթե տարին ունի 310 աշխատանքի որ, և տնուրը միջին թվով 700/0 ածխածին (C) և պարունակում, վորն այրվելու առաջ է բերում ածխաթթու գազ, այս հավասարությամբ՝



**IX. ՈՔՍԻԴԱՑՈՒՄ. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ**

1. Սյուրումը քրվածնի մեջ յեվ ողուս. Այրումը թթվածնի մեջ՝ տարբերվում է ողի մեջ տեղի ունեցող այրումից նրանով միայն, վոր դուս թթվածնի մեջ ալրման պրոցեսն ալելի արագ ու յեռանդուն է կատարվում քան ողում:


Ողում թթվածինն, ինչպես արդեն ասված է, մեծ չափով խառնված է ազոտի հետ (ըստ ծավալի  $\frac{1}{5}$ ), վորն ալրման մեջ վոչ մի մասնակցություն չունի, այլ միայն պրոցեսն է դանդաղեցնում: Այրման ժամանակ, թե ողում և թե դուս թթվածնի մեջ, նույն պրոդուկտներն են ստացվում՝ տարբերի միացումը թթվածնի հետ: Թթվածնի և տարբերի բոլոր միացությունները մի ընդհանուր բառով կոչվում են սֆսիդներ: Տարբերի հետ թթվածնի միացման պրոցեսը կոչվում է սֆսիդացում: Յերբ մենք ասում ենք, թե նյութերն այրվում են թթվածնի մեջ, վոր թթվածինը «նպաստում է այրմանը», յերբեք չպետք է մոռանանք, վոր այրումը նույնքան ավյալ նյութի միացումն է թթվածնի հետ, վորքան թթվածնի միացումն այդ նյութի հետ: Դրանք միանում են փոխադարձաբար: Հեշտ է ասացուցել, վոր, որինակ, թթվածինը կարող է ջրածնի մեջ այրվել նույնպես, ինչպես ջրածինը թթվածնի մեջ: Ջրածնի այրվելը թթվածնի մեջ՝ մենք արդեն գիտել ենք:



Նկ. 60. Քրվածնի այրումը ջրածնի մեջ:

Ջրածնի մեջ թթվածնի այրվելու փորձը կարելի յե կատարել այսպես. բացվածքով գեպի ցած շուտ աված գլանը լցնում են ջրածնով, այնուհետև ջրածինը բռնկեցնում են և անմիջապես գլանի մեջ են մացնում մի խողովակ, վորից թթվածին է դուրս գալիս: Այն մոմենտին, յերբ խողովակի մի ծայրը գլանի բերանի մոտ ջրածնի բոցի մեջ է մտնում, անմիջապես խողովակի մյուս ծայրին բոց է նկատվում: Այդ ցրածնի մեջ այրվող քրվածնի բոցն է. Դրանի պատերը

քրտնում են, քանի վոր այրման ժամանակ ջուր և առաջանում (նկ. 60).



Թե բարդ և թե պարզ նյութերի այրման ժամանակ առաջանում են ոքսիդներ: Դրանք տարրերի ոքսիդներ են, վոր մտնում են բարդ նյութերի բաղադրության մեջ: Այսպես, որինակ՝ ստեարինն մոմի այրման ժամանակ առաջ են դալիս մոմի նյութի բաղադրության մեջ յերկու տարրի ոքսիդ—ջրածին ոքսիդ (ջուր) և ածխածին ոքսիդ (ածխածխած գազ):

Ն Ն Դ Ի Ր

Գրեցեք ստեարինի այրման ժամանակ տեղի ունեցող ռեակցիայի հավասարում, վորի ֆորմուլն է  $C_{18}H_{36}O_2$ :

Հայտնի չե, վոր վորոշ նյութեր հեշտ են այրվում, իսկ ուրիշները գժվար:

▲ Փ ա Ր Ճ. Մարսի ծայրին ամբարներ մի փոքրիկ կտոր ցելուլոզի, վորից պատրաստում են սանրեր և այլ առարկաներ: Միաժամանակ լամպի բոցի մեջ մտցրեք ցելուլոզը և նույն հաստությամբ ստվարաթղթի կտոր, կամ մարխ և խկուշյն հանեք: Ցելուլոզին խկուշյն բոցավառվում է, իսկ ստվարաթուղթը կամ մարխը չի այրվում:

Նման փորձ կատարեցեք վերցնելով ստվարաթղթի կտոր և մագնեզիումի ժապավեն: Վորպեսզի մագնեզիումը վառվի, այն ավելի շատ պետք է տաքացնել քան ստվարաթուղթը: ▲

Փոսֆորը կարելի չե այրել տաք ջուր պարունակող փորձանոթի միջոցով:

Այրվող յուրաքանչյուր նյութի համար մոտավորապես կարելի չե վորոշել այն ջերմաստիճանը, վորի մեջ նա վառվում է: Այդ ջերմաստիճանը կլինի նրա բոցավառման ջերմաստիճանը. Փոսֆորի բոցավառման ջերմաստիճանն է մոտ  $50^\circ$  ծծմբինն ու փայտինը— $270^\circ$ , ածխինը—մոտ  $350^\circ$ , ջրածնինը—մոտ  $600^\circ$ , մագնեզիումինը—մոտ  $800^\circ$ , լերկաթինը—եւ ավելի բարձր:

Արդեն այրվող նյութը շարունակվում է այրվել, վորովհետև տե այդ ժամանակ անջատվող ջերմությունը բոցին մոտիկ մասերը տաքացնում է մինչև բոցավառվելու ջերմաստիճանը: Հաջողավոր է տաքացնել միայն ռեակցիայի սկսելու համար:

Այրումը կարելի չե դադարեցնել կամ ողի հոսանքը դադարեցնելով, կամ այրվող նյութը բոցավառման ջերմաստիճանից ցածր պահեցնելով:

Յերբ մենք կրակի վրա ջուր ենք ածում, մենք վոչ միայն պողեցնում ենք այրվող նյութը, այլև արգելում ենք ողի հոսանքը դեպի այն:

Վոր իրոք այրվող նյութը կարելի չե հանգցնել միայն նրա ջերմաստիճանն իջեցնելով, այդ հեշտ կերպով կարելի չե ցույց տալ հետևյալ փորձով: Յերկաթյա տիգելը քիչ քանակությամբ սկիպիդար են ածում ու փորձում վառվող մարելով այն այրել: Սկիպիդարը չի վառվում: Յերբ տիգելը թեթև կերպով տաքացնում են և ապա նոր մոտեցնում վառվող մարխը—սկիպիդարը վառվում է:

Վորքան շատ են տաքացնում տիգելը, այնքան այրումն ավելի յետանդուն է ընթանում: Յեթե տիգելը սառեցնենք, դենք սառը ջրի մեջ, սկիպիդարի այրվելը կթուլանա և, վերջապես, բոլորովին կզաղարի:


Հեշտ այրվող նյութերը կոչվում են հրավառ:

Կրակից հեշտ են այրվում գազային և շուտ ցնդող նյութերը, նույնիսկ յեթե նրանք բոցավառման բարձր ջերմաստիճանն ունենան Իրա պատճառն այն է, վոր դադն արագությամբ է տաքանում մինչև բոցավառման յեմաստիճանը, քան հեղուկ և կարծր նյութերը: Այդ պատճառով եւ հրավառն ու նյութերին են պատկանում վոչ միայն բոցավառման ցածր ջերմաստիճանն ունեցող՝ այրվող նյութերը, այլև հեշտ ցնդող նյութերը, ինչպես սպիրտը, բենզինը, յեթերը:

Բենզինը շատ հաճախ գժբախտ դեպքերի պատճառ է լինում: Մարդիկ, վորոնք չգիտեն, թե վորքան շուտ ցնդող ու հրավառն ու նյութ է բենզինը, հաճախ բենզինով վորեկե բան են մաքրում կամ կրակին մոտ բենզինը մի ամանից մի ուրիշ աման են ածում: Յեթե նույնիսկ կրակը հետո չե, աբազ տաքածվող բենզինի գոլորշիները հեշտությամբ հասնում են կրակին ու վառվում: Բենզինի գոլորշիները հեշտությամբ կարող են բոցավառվել վոչ միայն մոմից կամ լամպից, այլև վառվող վառարանից, սենյակի մյուս ծայրին գցած լուցիկուց: Հսկայական

բոց և ստացվում, վոր ընդդրկում և աշխատողին. նրա վրա հագուստը վառվում և:

Մարդու վրա վառվող հանդուստը հանդցնելու միակ միջոցն և նրան ծածկել վերմակով, մուշտակով, գորգով և այլն և պինդ փաթաթել՝ ոգի հոսանքը դեպի այրվող հագուստն արդելելու համար (նկ. 61):



Նկ. 61. Մարդու վրա վառվող հագուստը հանգցնելը:

Զրից թեթև են և լողալով Զրի յերեսին՝ շարունակվում են այրվել:

2. Պլումբոսի օգտագործումը. Մարդն սկսել և ոգտվել կրակից՝ անհիշելի, նախապատմական ժամանակներից:

Առաջին անգամ մարդը կրակին պատահել և հավանորեն պատահական կերպով: Կրակը կարող և առաջանալ կայծակից, վառված չոր փայտից: Մարդն սկզբում անկասկած գործացած էր կրակով և նրա մեջ միայն աստվածային ուժ էր տեսնում, իսկ հետո սովորեց ոգտվել կրակից և պահել խարուկի մեջ չոր խոտ ու ճյուղեր գցելով: Ժամանակի ընթացքում նա սովորեց նաև կրակ ձեռք բերել և նախամարդու կյանքում այդ մեծ նվաճում էր: Փայտի չոր կտորները մեկը մյուսին շփելով նա կրակ ձեռք բերեց՝ խարուկ վառելու:



Նկ. 62. Փայտի չոր կտորներն իրար շփելով կրակ են ստանում:

համար, վորի մոտ տաքանում էր մարդը, կերակուր էր լեվում և վորով իր թշնամիներին—վայրի դաղաններին վախեցնում էր (նկ. 62):

Մարդու հետևյալ նվաճումը կայծաքարի և կոլչեդանի կտորաների միջոցով կրակ վառելը յեղավ:

Կարծր կայծաքարով յերկաթի կոլչեդանին՝  $FeS_2$  հարվածելով, առաջացած տաքության շնորհիվ կոլչեդանից կայծեր են թռչում այս ու այն կողմ, վորոնցով կարելի յե վառել չոր խոտ և շուտ բոցավառվող այլ նյութեր:

Ծծմբական կոլչեդանն ուրիշ կերպ կոչվում է պիրիտ: Այդ անունն առաջացել է հունարեն «պիր» բառից, վոր նշանակում է կրակ: Այս հանգամանքը ցույց է տալիս, վոր կոլչեդանը գործածվել է նախապատմական ժամանակներում և, ըստ յերևույթին, հայտնի յե յեղել նաև հին հույներին:



Նկ. 63. Կայծաքարի յեվ հրահանի ոգնությունը կրակ են ստանում:

Հետագայում պիրիտը փոխարինվեց յերկաթի կտորով (հրահանով) (նկ. 63): Կրակ ստանալու այդ յեղանակին ընդհանուր գործադրության մեջ էր ամեն տեղ, զեռ սրանից մոտ 150 տարի առաջ: Այն ժամանակ զեռ վոշ լուցկի կար, վոշ գաղ, վոշ նավթի լամպ, վոշ էլ ստեղծվել մոմեր: Ճարպի մոմեր կային միայն:

Շատ հազարամյակների ընթացքում կրակը և վառելանյութը միայն տնային առողջա կարիքների համար էլին ոչտագործում: Միայն վերջին հարյուրամյակում վառելանյութն այն նշանակութունն ստացավ, ինչ նշանակութուն վոր նա այժմ ունի:

Վառելանյութն այժմ մեղ անհրաժեշտ է վոշ միայն ընտկարան տաքացնելու և կերակուր պատրաստելու համար, ինչպես առաջներումն էր, այլ նա խոշորագույն նշանակութուն ունի և արյունաշերտի համար, վորպես շարժիչ ուժ՝ Ֆարբիկների ու գործարանների, յերկաթուղիների, շոգենավի, ավտոմոբիլների, անրոպլանների, զուգաանտեսական մեքենաների ու արակտորների համար: Վառելանյութն անհրաժեշտ է նաև էլեկտրոններգիա, լուսատու գաղ, կոքս, քարածխային խեժեր

ստանալու համար, ինչպես և հանքերից մեռաղներ ձուլելու համար:

Չուտ քիմիական արտադրութիւնների համար վառելա- նյութին անհրաժեշտ է մի շարք պրոցեսներ կատարելու համար. ստաքացնելու, գոլորշիացնելու, թորելու, չորացնելու, շիկացնելու համար և այլն:

Յեթե վառելանյութին անհրաժեշտ է բոլոր յերկրների հա- մար, ապա մեր չերկրի համար, սոցիալիզմ կառուցող յերկրի համար, նա ավելի կարևոր նշանակութիւնն է ստանում: Մեզ անհրաժեշտ են հսկայական քանակութեամբ նյութեր, անստա- ման մեծ քանակութեամբ եներդրաւ Այս բոլորը մեզ կարող է յոյժ միայն վառելանյութը:

Արտադրութեան համար անհրաժեշտ դիւստր վառելանյութերն են՝ քա- ռածուխը, տորֆը և նավթը:

Քարածուխը մեր արդյունաբերութեան եներդեւորի կարևոր բաղան է հանդիսանում: Նրա պաշարը ԽՍՀՄ-ում հսկայական է: Մեր դարաշրջանում նոր քարածուխ չէ առաջանում և յետո՞ւ պաշարը չի լրացվում: Այդ պատճա- րով էլ այնտեղ, ուր այդ հնարավոր է, քարածուխը փոխարինում են տորֆով փոքր քանակութեամբ և ճահճոտ վայրերում:

Ներքին այրման շարժիչների, տրակտորների, ավտոմոբիլների, տերուպ- լանների համար վառելանյութ տալիս է նալիր: ԽՍՀՄ նավթի պաշարն այլ յերկրների հետ համեմատած, հսկայական է, բայց և այնպես նա ստախճանարար սպառվում է Այդ պատճառով էլ ձեռք են առնում բոլոր միջոցները, վոր թան- դարժեք այդ վառելանյութը չծախսվի այնտեղ, ուր նա կարող է քարածուխով ու տորֆով փոխարինվել:


Փայտը, վորպէս վառելանյութ, արտադրութեան համար ավելի նվազ ար- ժեք ունի:

Վառելանյութը կարելի չէ փոխարինել բարձր տեղից բախվող ջրի ուժով (Շապիտակ ածխով) և նամու ուժով: Մակայն հաշիվները ցույց են տալիս, վոր եներդեւորի այդ աղբյուրները, նույնիսկ նրանց լրիվ սպառութեան դեպքում, կարող են միայն մասամբ փոխարինել գործածվող վառելանյութը: Մասնավո- բապես մե: Միութեան ջրային ուժերը կազմում են բնդհանուր եներդեւորի պաշարի միայն 40/100 եներդեւորի մյուս քանակութիւնը մենք ստանում ենք վառելանյութից, և վառելանյութի խնդիրն ու նրա սոցիոնալ սղապարծումը սոցիալիստական տնտեսութեան հիմնական խնդիրն է կազմում:

**3. Քարածխի յեվ փայտի չոր բորումը.** Շատ բարդ նյութ- թեր, վոր իրենց բաղադրութեան մեջ պարունակում են ածխա- ծին և ջրածին, այսպէս կոչվող սրգանական նյութեր, ողի բա- ցակայութեամբ շատ թե քիչ ուժեղ չափով սաքացնելիս քայ-

քայվում են ավելի պարզ նյութերի — գաղալին, հեղուկ էւ պինդ:

▲ Փ ո ռ ծ. Փորձանոթի 2/3 մասը լցրեք չոր փայտի կտորներով: Փոր- ձանոթի բերանը ծածկեցեք խցանով, վորի միջով անց է կացրած ապակե կարճ խողովակ: Վորի մի ծայրը բաժական չափով անցնի փորձանոթի մեջ, ինչպէս ցույց է տրված ՅՔ-ը: Նկարում: Փորձանոթը թեք դիրքով, ինչպէս նշված է նկարում, ամ- բարեք պտտմանդանի վրա և ապա տաքացրեք սոյի-տայրոցի բոցով փորձանոթի հատակից սկսած: Փորձանոթից դուրս յեկող գազն այ- բեցէք, շարունակեցեք տաքացնել այնքան, մինչև վոր դադարի դադի անջատումը:



Չգուշութեամբ լաց անելով փորձանոթը՝ նրա մեջ հալաքված հեղուկը դատարկեցեք մի ուրիշ փորձանոթի մեջ: Թափեցեք առաջին փոր- ձանոթից սաքացած ածուխը: Ուշադրութիւնը դարձրեք նրա խտութեան և պինդ հատակ վրա դրելով հնչուումիւն վրա՝ դրանք լավ ածխացրած ածխի հատկութիւններն են:

Նկ. 64. Փայտի չոր բորում

Հետադուրեցեք փայտը տաքացնելու ժամանակ առաջացած հեղուկը: Այդ հեղուկի մեջ կարելի չէ նկատել բնորոշ հոտ ունեցող՝ գորշագույն ձյութի կաթիլներ: Հեղուկը փորձեցեք լակմուսով: Գուք կհամոզվեք, վոր հեղուկը գուա ջուր չէ, այլ թթու պարունակող լուծույթ, վորի մեջ լակմուսը կարմրում է: ▲

Փայտի չոր թորման ժամանակ առաջացող ջրային շերտը մոտիկից ուսումնասիրելը ցույց է տալիս, վոր այդ հեղուկը պարունակում է բացախարքու՝ քիչ քանակութեամբ այսպէս կոչ- ված փայտի սպիրտ և մի շարք այլ նյութեր: Չյութը նույնպէս ներկայացնում է սրգանական զանազան նյութերի խառնուրդ:

Առանց ողի հոտանքի, սրգանական նյութերի քայքայելը կոչվում է չոր բորում:

Փայտի չոր բորումն պրոդուկտները մեծ արժեք են ներ- վայացնում: Առաջներում փայտի սպիրտ ստանալու համար, վոր փորձադրվում է մետաղաբլդուանաբերութեան մեջ և առորյա գործադրվում, փայտը վառում էլին մի փոսի մեջ և վերել հողով կշանքում, փայտը վառում էլին մի փոսի մեջ և վերել հողով ծածկում, վորպէսղի ողի հոտանքը թուլանա, իսկ հեղուկների ու գաղալին նյութերի համար հող չէլին տանում: Այժմ փայ- տի չոր թորումը և ստացած պրոդուկտների վերամշակումն ան- տառա-քիմիական արդյունաբերութեան մի հսկայական բնա-

դավառ և կազմում և մեր Միության անտառով հարուստ մասերի անտեսության համար խոշոր նշանակություն ունի:

Բիմիական արդյունաբերության համար ել ավելի խոշոր նշանակություն ունի վառելանյութի մի այլ տեսակի—քարածխի չոր թորումը:

Քարածխի չոր թորումը նույնպես կարելի չէ կատարել փորձանոթի մեջ, բայց այս դեպքում ավելի ուժեղ կերպով պետք է առաջանել: Այստեղ նույնպես ստացվում են այրվող գազեր, լուսազազ, հեղուկ նյութեր և մնում է կարծր ածուխ, վոր կոչվում է կոֆ:

Կոքսը, ինչպես և ածուխը, բաղկացած է ածխածնից և խառնուրդներից, վորոնք այրման ժամանակ մոխիր են տալիս: Քարածխի չոր թորումը տեղի չէ ունենում հակայական չափերով գործարաններում, լուսազազ և կոքս պատրաստելու համար: Լուսազազը գործ են ածում օսմոքյան և լուսավորության համար:

Հանքաքարից մետաղներ ձուլելու համար հսկայական քանակությամբ կոքս և պահանջվում: Այդ պատճառով էլ գոյաթյուն ունեն գործարաններ, վորոնք բացառապես կոքս են պատրաստում: Այդ գործարաններում գազը ծախվում է վառարանները տաքացնելու համար, վորտեղ կատարվում է չոր թորումն այնպես, վոր կողմնակի վառելանյութ չի պահանջվում: Հեղուկ պրոզուկաները հավաքվում և ուղարկվում են քիմիական գործարանները՝ վերամշակելու համար:

Հեղուկ նյութերը բաղկացած են ջրային մասից և սև ձյութից, բայց լակուտի թուղթն այդ հեղուկից չի կարճում, այլ կապում և Ուրեմն այստեղ ստացվող պրոզուկաներն այլ են, քան փայտի չոր թորման ժամանակ: Վառ հոտ ունեցող զքարածխային խեժը ներկայացնում է մեծ քանակությամբ օրգանական նյութեր, մի խառնուրդ: Այդ խեժի թորման ժամանակ մի շարք արժեքավոր նյութեր են ստացվում, ինչպես, որինակ՝ նավթային, կարբոյան թթու և այլն: Այդ պրոզուկաներից քիմիական գանազան բարդ սեպիցիաների մթոցով ստացվում են հսկայական քանակությամբ բազմապիսի արժեքավոր նյութեր՝ բազմազան յերանգեքով ներկող նյութեր, գեղարայք, պայթուցիկ և թունավոր նյութեր:

Քարածխի չոր թորման ժամանակ ստացված ջրային հեղուկն իր մեջ պարունակում է ամոնիակ՝  $\text{HN}_3$ , վոր յեյան ութ և ծառայում արհեստական կերպով պրոտական պարաբալոնների արտադրության համար:

**4. Բոց.** Այրումը կարող է տեղի ունենալ թե բոցով և թե առանց բոցի: Առանց բոցի յեն այն նյութերը, վորոնք այրման ժամա-

նակ չեն վառարկվում գազի, ինչպես ածուխը, վոր միայն շիկանում է ու առկայծում, և ինչպես չերկաթը, վորը թթվածնի մեջ այրելիս տալիս է միայն կայծեր—այս ու այն կողմ ցրվող չերկաթօքսիդի շիկացած մասնիկներ: Իսկ յերբ նյութն այրվում է բոցով, այդ նշանակում է, վոր այդ նյութը կամ գազային վիճակում է, ինչպես ջրածինը, լուսատու գազը, ածխածին օքսիդը, կամ թե այլման ժամանակ փոխարկվում է գազերի:

Սպիրտայրոցը դնելիս մենք նրա մեջ յերեք մաս ենք տեսնում՝ ներքևի մաս՝ A նուրբ կապտավուն գույնի և միջին մասը՝ B, պարզ լուսավորող դեղին գույնի բոցով, և վերևի մաս՝ B, ավելի բաց գույնի բոցով: Բոցը դնելիս լավ է լինում, յերբ լամպի պատրուկը շատ դուրս հանած չի (նկ. 65): Բոցը պետք է ունենա միջին մեծություն:

Վարակազի վճռենք այն հարցը, թե ինչ է կատարվում բոցի վանազան մասերում, թե ինչ են այդ մասերը, հետևյալ փորձերը կատարենք:



Նկ. 65. Սպիրտայրոցի բոցի կազմությունը:



Նկ. 66. Փայթիկ սպիրտայրոցի բոցի մեջ ամացնելը:

▲ Փորձ Բոցի մեջ մտնելու մտքեր և պահեցեք հորիզոնական ուղղությամբ, ինչպես ցույց է արված 66-րդ նկարում: Հենց վոր մարին սկսի սեպանալ, իսկույն հանեք, չթողնելով վոր նա վազի: Մարի յերկու տեղ ածխանում է—բոցի յեղբերի մոտ: ▲

Փորձը ցույց է առելիս, վոր բոցի ածխանալու մասը միջին B մասն է: Իսկ ինչ կա սպիրտայրոցի բոցի ներքևի A մասում: Այդ հարցը վճռելու համար հետևյալ փորձը կատարենք:

▲ Փորձ 2. Գինեթով կամ ունելով վերորեք ապակե խողովակի մե կտոր (մոտ 10 սմ յերկարությամբ) և լավ տաքացնելով սպիրտայրոցի բոցի վրա, պահեք թեք դիրքով արնպես, վոր նրա ծայրը լինի A բոցի միջին մասում (նկ. 65): Խողովակի մյուս ծայրին մոտեցրեք վառիչք լուցիկին: Խողովակի ծայրին առաջ և դալիս փորքիկ բոցի Այդ սպիրտի գույրը ներքև են վազում, վոր գանձում են բոցի միջին մասում և գուրս են գալիս խողովակի միջին մասը: Խողովակը պետք է տաքացնել, վորպեսզի գույրը նրա մեջ չխտանա: Յեթն խողովակի ծայրը բարձրացնելը դեպի բոցի B մասը, խողովակի մյուս ծայրի բոցը կհանգչի: Ուրեմն այստեղ սպիրտի գույրը ներքև չկան:

Կատարած փորձերը ցույց են տալիս, վոր այրումը տեղի չե ունենում բոցի միայն վերին և արտաքին մասում, իսկ բոցի ներքին մասում գտնվում են սպիրտի գոլորշիները, վորոնք այդտեղից ցնդում են: Իսկ բոցի արտաքին հազիվ տեսանելի Յմաստում արդեն լինում են միայն աչրումից առաջացող շիկացած պրոպուլանները:



Նկ. 67. Սպիրտային բոցից սպիրտի գոլորշիներ դուրս բերելը:

Ճիշտ աշխատելու, ինչպես սպիրտային բոցի մեջ սպիրտի գոլորշիներ են լինում, այսպես էլ ծծմբի, ֆոսֆորի, մագնեզիումի բոցերի մեջ կան այդ նյութերի գոլորշիներ, վորոնք և բոց են առաջացնում:

Մարխի բոցը նույն կազմութունն ունի, ինչ կազմութունն վոր մյուս բոցերն ունեն: Յեթե մարխի բոցը վաչենք, նրանից միառժամանակ բնորոշ հոտով ծուխ դուրս կգա: Այդ իհարկե, փայտի գոլորշիները չեն, այլ փայտի չոր թորման մեջ ծանոթ պրոպուլանները, նույն դաղերն ու գոլորշիները, վոր ստացվում են փայտն առանց ոգի հոսանքի տաքացնելիս: Այդ գազն ու գոլորշիները հենց կազմում են բոցի ներքին մասը:

Մոմի բոցի մեջ էլ դաղեր ու գոլորշիներ են գտնվում, դրանք ստեղծում են չոր թորման պրոպուլաններն են:

▲ Փորձ 3. Փորձեր կատարելիք մոմի վրա, տաքացրած ապակի խողովակի ողնությամբ նրա բոցի միջին մասից գազեր դուրս բերելով (ինչպես այդ արիք նախորդ փորձի ժամանակ): Ուշադրություն դարձրեք այդ գազերի սուր հոտի վրա, վոր նման չի մոմի նյութի հոտին: ▲

Դիտելով մոմի բոցը և այն համեմատելով սպիրտային բոցի հետ՝ մենք ելական մի տարբերություն ենք նկատում — մոմի բոցի լուսավոր լինելն և այդ իսկ ինչից և այդ կախված:

▲ Փորձ 4. Մոմի բոցի վերին մասի մեջ վորեն սուր մարմին մտցրեք — բաժակ, դանակ, դավաթ: Դուք կնկատեք, վոր ամանի վրա մուր և առաջանում, այսինքն ածխի մասնիկներ: ▲

▲ Մոմի բոցը կարելի չի դարձնել և վոչ լուս-



Նկ. 68. Չոր բորման պրոպուլաններ մոմի բոցից դուրս բերելը:

սատու: Դրա համար զուրկ խողովակի ողնությամբ (բերանը դնելուց առջև խողովակն ախտահանեցեք, այսինքն ծայրը տաքացրեք սպիրտային բոցի վրա և ապա ստեղծեք): Բոցի մեջ ողի հոսանք փչեցեք (Նկ. 69): Ստացվում է համարյա անլուսատու բոց: Այդ բոցի մեջ սուր մարմին մտցրեք, նրա վրա մուր չի նստում: ▲

Մեր կատարած դիտողություններն ստիպում են յենթադրել, վոր բոցի մեջ ածխածնի մասնիկների առաջացումն և հենց մոմի բոցի լուսատու լինելու պատճառը: Այդ յենթադրությունը հաստատվում է նրանով, վոր նյութեր կան, վորոնք վոչ միայն լուսատու բոցով են վառվում, այլ այդ ժամանակ նաև ծխում են մուր անջատելով, ինչպես որինակ՝ նավթը: Այստեղ ածխի մասնիկները, դեռ չայրված, մասամբ բոցից անջատվում են, իսկ մոմի բոցի մեջ առաջացած ածխի մասնիկները բոցի արտաքին մասում աչրվում են, այդ պատճառով էլ նորմալ պայմաններում մոմը մուր չի տալիս:

Ողի ուժեղ հոսանքի ժամանակ (լամպերի մեջ) նավթը նույնպես այրվում է առանց ծուխ տալու: Ողի ուժեղ հոսանք է ստացվում ապակու շնորհիվ, վորի մեջ ձգողություն է առաջանում, ինչպես խողովակի մեջ (Նկ. 70 ողի մուտքը ցույց է արված սղաքներով):

«Պրիմուս» մեջ նավթի գոլորշիները բարակ հոսանքը լավ խառնելով ողի հետ՝ դարձյալ այրվում և առանց ծխացող բոցի:

Յեթե հիշենք, թե վոր նյութերն են այրվում պայծառ լուսատու բոցով, բանից դուրս կգա, վոր դրանք այնպիսի նյութեր են, ինչպես՝ մագնեզիումը, ֆոսֆորը, կալցիումը, վորոնց այրման պրոպուլանները կարծր նյութերն են ( $MgO$ ,  $P_2O_5$ ,  $CaO$ ): Իսկ այն նյութերը, վորոնց այրման պրոպուլանները գազային նյութեր են, ոգում այրվում են թույլ, քիչ լուսատու բոցով, ինչպես ջրածինը, ծծումբը:

Դրա պատճառն այն է, վոր շիկացրած պինդ նյութերն այլևի պայծառ լույս են տալիս, քան շիկացած գազերը:

Այժմ արդեն մենք կարող ենք պարզ պատկերացնել մոմի բոցի և այլ որգանական նյութերի լուսատու լինելու պատճառը: Այդ նյութերը հարուստ են ածխածնով, վորը բոցի մեջ կատար-



Նկ 69. Մոմի բոցի մեջ ող փչելը:

Կատարած փորձերը ցույց են տալիս, վոր այրումը տեղի չե ունենում բոցի միայն վերին և արտաքին մասում, իսկ բոցի ներքին մասում գտնվում են սպիրտի գոլորշիները, վորոնք այդտեղից ցնդում են: Իսկ բոցի արտաքին հաղիվ տեսանելի Յմասում արդեն լինում են միայն այրումից առաջացող շիկացած պրոդուկտները:



Նկ. 67. Սպիրտայրի բոցից սպիրտի գոլորշիներ դուրս բերելը:

Ճիշտ այնպես, ինչպես սպիրտայրոցի բոցի մեջ սպիրտի գոլորշիներ են լինում, այսպես ել ծծմբի, ֆոսֆորի, մագնեզիումի բոցերի մեջ կան այդ նյութերի գոլորշիներ, վորոնք և բոց են առաջացնում:

Մարխի բոցը նույն կազմությունն ունի, ինչ կազմությունն վոր մյուս բոցերն ունեն: Յեթե մարխի բոցը փչենք, նրանից միառժամանակ բնորոշ հոտով ծուխ դուրս կգա: Այդ, իհարկե, փայտի գոլորշիները չեն, այլ փայտի չոր թորման մեկ ծանոթ պրոդուկտները, նույն գազերն ու գոլորշիները, վոր ստացվում են փայտն առանց ողի հոտանքի տաքացնելիս: Այդ գազն ու գոլորշիները հենց կազմում են բոցի ներքին մասը:

Մոմի բոցի մեջ ել գազեր ու գոլորշիներ են գտնվում, դրանք ստեարինի չոր թորման պրոդուկտներն են:

▲ Փորձ. 3. Փորձեր կատարելից մոմի վրա, տաքացրած ապակի խողովակի ողնությամբ նրա բոցի միջին մասից գազեր դուրս բերելով (ինչպես այդ արիք նախորդ փորձի ժամանակ): Ուշադրություն դարձրեք այդ գազերի սուր հոտի վրա, վոր նման չի մոմի նյութի հոտին: ▲

Դիտելով մոմի բոցը և այն համեմատելով սպիրտայրոցի բոցի հետ՝ մենք եյական մի տարբերություն ենք նկատում — մոմի բոցի լուսավոր լինելն և այդ իսկ լինելից և այդ կախված:

▲ Փորձ. 4. Մոմի բոցի վերին մասի մեջ փոքր և սառը մարմին մտցրեք — բաժակ, դանակ, գավաթ Դուք կնկատեք, վոր ամանի վրա մուր և առաջանում, այդինքն ածխի մասնիկներ: ▲

▲ Մոմի բոցը կարելի չե դարձնել և վաչ լու-



Նկ. 68. Չոր բորման պրոդուկտներ մոմի բոցից դուրս բերելը:

սատու: Դրա համար դրող խողովակի ողնությամբ (բերանը դնելուց առաջ խողովակն ախտահանեցեք, այսինքն ծայրը տաքացրեք սպիրտայրոցի բոցի վրա և ապա սառեցրեք): Բոցի մեջ ողի հոտանք փչեցեք (Նկ. 69): Ստացվում է համարյա անլուսատու բոց: Այդ բոցի մեջ սառը մարմին մտցրեք, նրա վրա մուր չի նստում: ▲



Նկ. 69. Մոմի բոցի մեջ ող փչելը:

Մեր կատարած դիտողություններն ստիպում են յենթադրել, վոր բոցի մեջ ածխածնի մասնիկների առաջացումն և հենց մոմի բոցի լուսատու լինելու պատճառը: Այդ յենթադրությունը հաստատվում է նրանով, վոր նյութեր կան, վորոնք վաչ միայն լուսատու բոցով են վառվում, այլ այդ ժամանակ նաև ծխում են մուր անջատելով, ինչպես որինակ՝ նավթը: Այստեղ ածխի մասնիկները, դեռ չայրված, մասամբ բոցից անջատվում են, իսկ մոմի բոցի մեջ առաջացած ածխի մասնիկները բոցի արտաքին մասում այրվում են, այդ պատճառով ել նորմալ պայմաններում մոմը մուր չի տալիս:

Ողի ուժեղ հոտանքի ժամանակ (լամպերի մեջ) նավթը նույնպես այրվում է առանց ծուխ տալու: Ողի ուժեղ հոտանք է ստացվում ապակու շնորհիվ, վորի մեջ ձգողություն է առաջանում, ինչպես խողովակի մեջ (Նկ. 70 ողի մուտքը ցույց է տրված սլաքներով):


«Պրիմուսի» մեջ նավթի գոլորշիները բարակ հոտանքը լավ խառնելով ողի հետ՝ դարձյալ այրվում է առանց ծխացող բոցի:

Յեթե հիշենք, թե վոր նյութերն են այրվում պայծառ լուսատու բոցով, բանից դուրս կգա, վոր դրանք այնպիսի նյութեր են, ինչպես՝ մագնեզիումը, ֆոսֆորը, կալցիումը, վորոնց այրման պրոդուկտները կարծր նյութերն են ( $MgO$ ,  $P_2O_5$ ,  $CaO$ ): Իսկ այն նյութերը, վորոնց այրման պրոդուկտները զազային նյութեր են, ողում այրվում են թույլ, քիչ լուսատու բոցով, ինչպես ջրածինը, ծծումբը:

Դրա պատճառն այն է, վոր շիկացրած պինդ նյութերն ափելի պայծառ լույս են տալիս, քան շիկացած գազերը:

Այժմ արդեն մենք կարող ենք պարզ պատկերացնել մոմի բոցի և այլ որգանական նյութերի լուսատու լինելու պատճառը: Այդ նյութերը հարուստ են ածխածնով, վորը բոցի մեջ կատար-

Վող չոր թորման սյուղի Ժամանակ անջատվում է ազատ վիճակում՝ վորպես մուր: Շեկացրած մըրի մասնիկներն են, վոր լույս են տալիս: Բոցի արտաքին մասում մուրը կարող է կամ ամբողջությամբ այրվել, ինչպես՝ օրինակ մումի բոցի մեջ, կարող է և մասամբ անջատվել ազատ վիճակում ինչպես՝ նավթի (առանց աղաղու այրվող), սկիտիզարի, չուղի, մասամբ ել փայտի և այլ նյութերի բոցի մեջ: Ոգի ուժեղացած հասանքը կարող է այդ դարձնել չծխացող և լույս չստանալ: Վերջին դեպքում, շնորհիվ այն հանդամանքի, վոր չոր թորման սյուղի կանոնները խառնվում են ոգի թթվածնի հետ, անխաժինը չի կարողանում անջատվել



Նկ. 70. Նավթի լամպի:

ազատ վիճակում, վորովհետև դեռ դուրս չեկած՝ լրիվ չափով խեղույն այրվում է և առաջ բերում անխաթթու գազ (որդանական նյութերի մեջ յեղած ջրածինը տալիս է ջրային գոլորշի): Ավելի քիչ անխաթին պարունակող որդանական նյութերն այրվում են քիչ լուսատու և չծխող բոցով, ինչպես սպիրտը:


**ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՆԵՐ**

1. Ի՞նչ կապտանի, յի՞նչ անոթը ծծմբի գոլորշիներով լցնենք, դուրսի ներս այրենք և ազատ անոթի մեջ թթվածնի հոսանք անցկացնենք:
2. Բոցավառման ցածր ջերմաստիճան ունեւող յերկու նյութերի անուն տվեք:
3. Վոր նյութերն են կոչվում հրափամուր:
4. Ինչու այրվող բեկյունը և կեղտոտները ջրով չի կարելի հանդիպել:
5. Մտաքերեցիկ հրակ առաջացնելու նախնական ձևերը:
6. Ի՞նչ է չոր թորումը:
7. Ի՞նչ է կոքոր և ինչի համար են գործածում:
8. Չերմաստիճանն ինչպե՞ս և բաշխվում բոցի մեջ:
9. Ի՞նչպե՞ս պետք է բարձրացնել բոցի ջերմաստիճանը:
10. Ի՞նչից է կախված որդանական նյութերի բոցի լուսատու լինելը:
11. Բերե՛ք նյութերը՝ որինակներ, վորոնք այրվում են ոչում քիչ լուսատու բոցով:

12. Ինչու ստեարինը դաղի մեջ այրելիս ծխում է, իսկ ստեարինն մոմի բոցը չի ծխում:


5. Ածխածին օքսիդ. Գեներատորի գազ. որդանական նյութերի այրման Ժամանակ, յերբ ոգի հոսանքն անբավարար է լինում, բացի անխաթթու գազից՝ CO<sub>2</sub>, առաջանում է նաև անխաթնի մի այլ սքսիդ—անխաթինօքսիդը կամ շմուլագազը՝ CO:

Ածխածին սքսիդ և ստացվում նաև այն Ժամանակ, յերբ ուժեղ կերպով շիկացած անխաթ վրայով անխաթթու գազ են անցկացնում: Ածուխն անխաթթու գազի մոլեկուլից խլում է մի ատոմ թթվածին և ստացվում է շմուլի յերկու մոլեկուլ:



Վորդան անուխն ուժեղ է շիկացած, այնքան ել շատ շմուլ է ստացվում: Ածուխը թույլ շիկանալիս բոլորովին շմուլ չի առաջանում:

Ածխածին սքսիդ կարելի չէ ստանալ այսպես. Ածուխը տեղափոխում են յերկաթյա A խողովակի մեջ (նկ. 71) և խողովակը B կրակարանի վրա շիկացնում են: Շեկացրած




Նկ. 71. Ածխածին օքսիդի ստացումը:

խողովակի միջով անց են կացնում անխաթթու գազ, վոր ստացվում է նկարի ձախ կողմի անոթի մեջ՝ մարմարի վրա անխաթթվի միջոցով ներդարձելով: Սաղավակի մեջ՝ անխաթթու գազն անխաթ ենա օւտակցիա յի տալիս՝ առաջացնելով անխաթին սքսիդ: Ածխաթթու գազի ավելցուկը մնում է B խողովակի մեջ: Առաջացող անխաթին սքսիդը հավաքում են փորձանոթի մեջ՝



Չրի վրա: Փորձը կարելի չե կատարել միայն ոգ քաշող պահարանի մեջ:


Ածխածին ոքսիդը շատ ուժեղ բույն է: Ածխածին ոքսիդի ամենաանհշան խառնուրդն ողի հետ թունավորում է առաջացնում (շմուլ), վորին ուղեկցում է գլխացավ և աղմուկ ախանջներում: Իսկ ըստ ծավալի 10% խառնուրդն ողը դարձնում է շատ թունավոր և այդ ողի նույնիսկ կարճատև ներշնչումը թունավորման լուրջ հետևանք է ունենում—գլխակցության կորուստ և վերջապես—մահ: Ածխածին ոքսիդով լուրջ թունավորվելու ժամանակ, անհրաժեշտ է թունավորվողին նախ և առաջ դուրս տանել մաքուր ողի մեջ: Յեթե այդ չոգնի, ապա պետք է մարմինը տրորել և մաքուր թթվածինով արհեստական շնչառություն առաջացնել:



Նկ. 72. Ինֆուսյոնի կերվածք:

Այրվող շմուլի բոցը կարելի չե տեսնել վառարանը վառելու ժամանակ: Այդ կապտավուն այն բոցերն են, վորոնք նկատելի չեն շիկացրած ածխի վրա, չերբ փայլան արդեն վառվել է և մնում են ածխի դեռ ամբողջովին չվառված մասեր: Այդ նույն բոցերը տեսանելի չեն ինքնայնուրի մեջ, յերբ դեռ նրա մեջ շիկացած շատ ածուխ է լինում:

Ածխածին ոքսիդի այրման դեպքում ստացվում է ածխածին գազ՝ CO<sub>2</sub>:




Ինքը՝ ածխածին ոքսիդն անգույն, անհոտ գազ է, չբուս քիչ է լուծվում և այն տեսնելն առանձնապիս հետաքրքրական մի բան չի:


Ինքնայնուրի ինչպիս է առաջանում ածխածին գազ: Ինքնայնուրի կտրվածքը ցույց է տրված 72-րդ նկարում: Նրա ներսի խողովակը լցված է շիկացած ածխով: Ներքևից ցանցի միջով մտնում է ողը: Ածխի այրման ժամանակ առաջանում է

ածխածին գազ, վորը վերին շերտերի շիկացած ածխի հետ ունակցիտ յե տալիս և առաջ է բերում ածխածին ոքսիդ: Ածխածին ոքսիդը ինքնայնուրի խողովակից անցնում է խոհանոցի ծխնելույղ:


Յեթե ածխի այրումից առաջ, այսինքն՝ յերբ դեռ ածուխն զգալի չափով չի սպակասել, ինքնայնուրի խողովակը հանենք, այդ դեպքում առաջացող ածխածին ոքսիդը՝ CO մասամբ այրվում է ի հաշիվ վերևից մտնող ողի: Իսկ հաճախ ածխածին ոքսիդը լցվում է սենյակը, և մարդիկ կարող են թունավորվել—«շմուլ ընկնել»: Իսկ չեթե ինքնայնուրի մեջ ածուխ քիչ մնա, այդ դեպք



Նկ. 73.



Նկ. 74.



Նկ. 75.

Ածխածին սեսիդի յեվ ածխաբու գազի առաջացումը սե եյ ա կ ի վառարանում (կերվածք):

բում ներքևի անցքից մտնող թթվածնի քանակությունը բավական է, վորպիսպի առաջացող ածխածին ոքսիդն ամբողջութամբ այրվի: Բացի այդ շմուլն ել քիչ է առաջանում, վորովհետև ածուխն ամբողջութամբ բնորոշված լինելով ողով, ամբողջովին կայրվի և կտա ածխածին գազ: Ածխածին ոքսիդ չի առաջանում նաև այն դեպքում, յեթե մեծ քանակութամբ ածուխ պարունակող ինքնայնուրի կախարիչով ծածկենք: Շնորհիվ այն բանին, վոր ողի հոսանքը պակասում է, դրանով ածխի ջերմաստիճանն իջնում է, և ածխածին ոքսիդի առաջացումը դադարում է:

73-րդ, 74-րդ, 75-րդ նկարները ցույց են տալիս, թե սենյակի վառարանում ինչ պայմաններում է առաջանում ածխածին ոքսիդ:

73-րդ նկարում— վառարանի մեջ ածուխ շատ կա: Խողովակը

վաղը բաց ե: Ողբ ներս ե մտնում նրա շուրջը յեղած բոլոր անցքերից: Ածխի ալրման ժամանակ առաջանում ե անխաթթու գազ, վորն անխի կույտի վերին շերտերում շիկացած անխի հետ ունակցիայի մեջ ե մտնում ե առաջացնում անխածին ոքսիդ: Ածխածին ոքսիդը գուրս գալով անխի կույտի յերեսը, այնտեղ այրվում ե յեկող թթվածնի մեջ կապտավուն բոցով: Ածխաթթու գազը ե ազոտը միասին խողովակով գուրս են գալիս:

74-րդ նկարում խողովակը ծածկված ե ժամանակից առաջ, յերը դեռ անուխ շատ կա ե ուժեղ կերպով շիկացած ե: Ներքեից վառարանի մեջ պող ող ե մտնում, իսկ ալրման տաք պրոդուկտները ե ողի ազոտը դեպի խողովակը յեւք չունենալով գուրս են գալիս վառարանից, դաան վրայի ճեղքից: Ինչպես ե առաջին դեպքում, առաջացած անխածին ոքսիդն արդեն չի այրվում, վորովհետե ողի բավարար հոսանք չկա, ե անխաթթու գազի ու ազոտի հետ միասին գուրս ե գնում:

75-րդ նկարում խողովակը ծածկված ե ժամանակին, յերը անուխն արդեն քիչ ե մնացել: Ածուխը վառարանի հատակին փռված լինելով՝ այնքան ել չի շիկացած, ինչպես կույտի ձևով յեղած ժամանակ: Ածխածին ոքսիդ կամ չի առաջանում, կամ առաջանում ե չնչին չափով, ե գրեից մուտք գործող սղը բավական ե, վոր նա լրիվ չափով այրվի: Վառարանի ճեղքից գուրս ե գալիս վոչ թունավոր անխաթթու գազը: Հիմա արդեն պարզ ե, թե ինչու վառարանը չի կարելի փակել, քանի դեռ անուխը շատ ե ե ուժեղ շիկացած ե:

Ուսանելի յե այսպիսի մի փորձ կատարել: Յերը վառարանում քիչ անուխ մնա, հաղաքեցեք, կույտ կազմեցեք, կույտի վրա իսկույն այրվող անխածին ոքսիդի կապտավուն բոցեր կառաջանան: Յեթե նորից անուխը հավասար շերտով վառարանի հատակին փռեք, անուխն ավելի մուգ գույն կաանա ե անխի վրայի բոցերն իսկույն կանհետանան: Շիկացած անխի հետ անխաթթու գազի շիման պայմաններ արդեն չեն լինի ե անխածին ոքսիդ այլևս չի առաջանա:

Այս սրինակից յերևում ե, վոր վառարանը վառելու ըստ յերևույթին շատ պարզ թվացող պրոցեսը պարզ հասկանալու ե աչք պրոցեսը դիտակցարար զեկավարելու համար անհրաժեշտ ե ծանոթանալ այդ ունակցիայի ժամանակ ստացվող նյութերի առաջացման պայմաններին ու հատկություններին:

Ածխածին ոքսիդի առաջացման պայմանների ուսումնասիրություն վրա մի շարք գիտնականներ են աշխատել:

Պետք ե կանգ առնել նաե այն հարցի վրա, թե «անխի նոս» կորոզ ե լինելը Չե վոր անխածին ոքսիդն ինքը հոտ չունի իսկ վիրտեղից ե առաջացել այն կարծիքը, թե շմուռ հոտ ունի: Բանն այն ե, վոր անխածին ոքսիդի առաջացման ամենալավ պայմանը մեծ քանակությամբ անուխը ե նրա բարձր ջերմաստիճանն ե: Իսկ այդ լինում ե այն ժամանակ, յերը փայտն ամբողջապես անխացել ե ե մնացել են միայն մեկ-յերկու ծխացող մանր փայտիկներ:

Անհրաժեշտ ե հիշատակել, վոր անխածին ոքսիդ ե առաջանում նաե փայտի չոր թորման ժամանակ, հետևաբար ե փայտի այրման ժամանակ, յերը ողն այդ այրման համար քիչ ե մատչելի: Այսպիսի պայմաններ կատարվեն նաե վաղ փակված վառարաններում, յերը դեռ նրա մեջ լրիվ չաչքված փայտի կտորներ կան, կամ հեշտացելու մեջ, յերը դեռ ամբողջ անուխը կրակ չի դարձել:


Մենք ծխի բնորոշ հոտ ենք առնում: Միաժամանակ ողի մեջ ե տարածվում ե անխածին ոքսիդը, այդպիսով, ծխի հոտն առնելով, միաժամանակ մենք կարող ենք Շշուլ ընկնել: Ծուխը մեղ նախազգուշացնում ե անխածին ոքսիդով թունավորվելու հնարավորություն:

Մտկայն անխածին ոքսիդ կարող ե առաջանալ, այն ել բավական քանակությամբ, նաե այն ժամանակ, յերը կա միայն մաքուր անուխ, փայտի կտորանքը բոլորն այրվել են, ե ծխի հոտ չի գալիս: Այդպիսի դեպքում մարդ Շշուլ ե ընկնում միանգամայն աննկատելի կերպով ե կարող ե թունավորվել ու մեռնել:

Ածխածին ոքսիդ կա յուսագաղի մեջ: Այդ պատճառով ել պետք ե հետևել, վոր գազատար խողովակների ծորակները միշտ լավ փակված լինեն: Լուսատու գաղից թունավորվելու շատ դեպքեր են հայտնի:

Ածխածին ոքսիդի հատկությունների ուսումնասիրությունը ցույց ե տալիս, վոր նրա այրման ժամանակ մեծ էներգիայով քանակությամբ ե անջատվում, վոր նրա բոցի ջերմաստիճանը շատ բարձր ե— մոտ 1400°: Այդ պատճառով ել վառարանները վառե-

լիս անհրաժեշտ է ողի հոսանքը կանոնավորել այնպես, վոր ածխածին ոքսիդը չցնդի խողովակի մեջ, վորովհետև այդ ուղղակի փնաս կլինի: Այնպես պետք է անել, վոր վառարանում առաջացած ածխածին ոքսիդը վառարանի մեջ այրվի ու տաքու-թյունը վառարանի պատերին տա: Այդ բանին առանձնապես կարևոր է հետևել գործարանային վառարանները վառելիս, վորտեղ հսկայական քանակությամբ վառելանյութ է վառվում և վորտեղ առանձնապես կարևոր է նրա տված տաքությունն ամբողջովին ոգտագործել:



Նկ. 76. Պարզ գազագեներատր (կտրված):


Ածխածին ոքսիդի հատկու-թյուններն իմանալը հնարավորություն է տալիս այդ սարսափելի թունավոր գազն անմիջապես ոգտագործել տեխնիկական նպատակների համար՝ վորպես վառելանյութ: Վորպես վառելանյութ ածխածին ոքսիդն ստացվում է նույն պայմաններում, ինչպես վոր նա հեշտոայեռի մեջ է առաջանում, բայց ավելի մեծ մասշտաբով:

76-րդ նկարում պատկերված է ածխածին ոքսիդ ստանալու վառարանը կամ այսպես կոչվող գազագեներատրը: Յեթե գազագեներատորի մեջ մեծ շերտով կոքս ածենք, վառենք ու ներքևից ոգ փչենք, կոքսը կվառվի և կառաջացնի ածխածին գազ: Յերբ

